31 ՕԳՈՍՏՈՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 156 (4536)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# «Իսլամը պետք է դառնա Եվրոպայի կրոն»

Այս հայտարարությունն արել է Լիբիայի առաջնորդ Մուամմար Քադդաֆին Հռոմում դասախոսություն կարդալիս: Ի դեպ, Քադդաֆիի դասախոսության համար Իտալիայի տարբեր շրջաններից ժամանել էին 500 կանայք, նրանցից 487-ին Քադդաֆին բաժանել է Ղուրանի նմուշներ: Երկու իտալուհի եւ մի իսպանուհի Լիբիայի առաջնորդին վստահեցրել են, որ իրենք պատրաստ են ընդունելու իսլամ: Քադդաֆիի դասախոսությունը կազմակերպած իտալական գործակալությունը նաեւ կազմակերպել էր ունկնդիրների այցելությունը Հռոմ: Այս նպատակով, ինչպես տեղեկացնում է «Ինտերֆաքսը», Իտալիայի մայրաքաղաքի շրջանից՝ Լացիոյից եկածներին տրամադրվել է 150-ական, իսկ երկրի հեռավոր շրջաններից ժամանածներին՝ 200-ական եվրո:

Հ. Ա.

# Մեդվեդեւը գնում է Ադրբեջան

## *Ռուսաստանն առաջարկում է հիմնարար սկզբունքների 2-3 չհամաձայնեցված հարցերով հանդերձ ամրագրել արդեն համաձայնեցվածը*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի պետական այցը Հայաստան օգոստոսի 19-20-ը մինչ օրս ու դեռ էլի մի որոշ ժամանակ հաստատապես մնալու է քննարկումների թեմա, քանի որ մեր տարածաշրջանում ռազմական հարցերն ու ընդհանրապես անվտանգությանը վերաբերող խնդիրները «խանդոտ» վերաբերմունք են առաջացնում նրանց մեջ, ում տվյալ պարագայում քննարկումը կամ որեւէ փաստաթուղթ չի վերաբերում:

ՌԴ նախագահի Հայաստան այցելության դեռեւս բոլոր արձագանքները չէ, որ հնչել են, սակայն մոտ է նաեւ Ադրբեջան Մեդվեդեւի այցելության ժամկետը, ուստի այդ առնչությամբ եւս կան առաջին պաշտոնական անդրադարձները: Սեպտեմբերի 2-3-ը Մեդվեդեւի՝ Բաքու կատարելիք պաշտոնական այցելությունից առաջ՝ նախորդ շաբաթավերջին, ադրբեջանական լրատվամիջոցներին այս կապակցությամբ հարցազրույց է տվել Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավար **Սերգեյ Լավրովը**:

Մեդվեդեւի, ըստ Լավրովի հարցազրույցի պաշտոնական սղագրության, Ադրբեջան կատարելիք առաջիկա այցելությանը քննարկվելու են երկկողմ ողջ հարաբերությունների առնչվող հարցեր, սակայն դրանցից հատկապես կարեւոր են պետական սահմանի պայմանագրի ու դրան առնչվող մեկ այլ փաստաթղթի՝ Սամուր գետի ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման համաձայնագրի ստորագրումը:

Բնականաբար, ադրբեջանական լրատվամիջոցները չէին կարող չհարցնել Գյումրու ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարաձգելու առնչությամբ ստորագրված արձանագրության մասին:

Տես էջ 8

# Չնայած խաղողի լավ բերքին՝ մթերման գները բարձր են լինելու

**Այս տարի Հայաստանում սպասվում է խաղողի լավ բերք՝ շուրջ 215 հազար տոննա: Չնայած լավ բերքին՝ խաղողի մթերման գները բարձր կլինեն: Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանի փոխանցմամբ՝ Երեւանի կոնյակի գործարանը 1 կիլոգրամ խաղողը կգնի 130 դրամով: Մյուս գործարանները կվճարեն նվազագույնը 120 դրամ: Ըստ news. am-ի՝ պայմանավորվածություններ կան նաեւ Արարատի ու Արմավիրի մարզպետների հետ, թե յուրաքանչյուր մթերող գործարան որքա՞ն եւ ի՞նչ գնով պետք է մթերի:**



**Այդ մարզերում խոշոր մթերողներ են «Նոյը», Պռոշյանի գործարանը եւ այլն:**

**Գերասիմ Ալավերդյանն անդրադարձել է նաեւ կարտոֆիլի դեֆիցիտի վերաբերյալ խոսակցություններին: Շուկայում առկա կարտոֆիլի անսովոր թանկությունը նախարարը պայմանավորել է 2 գործոններով: Նախ՝ անձրեւների պատճառով եղել է ցանքի ուշացում, բացի այդ՝ իրացման բարդությունների պատճառով գյուղացիները կրճատել են կարտոֆիլի ցանքատարածությունները:**

Ի. Պ.

ՀԱՅԱՑՔ

# Ռուսաստանը՝ Հայաստանի, Թուրքիան՝ Ադրբեջանի անվտանգության երաշխավորնե՞ր

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Թեպետ ՀՀ արտաքին քաղաքական ոլորտում տեղի ունեցող զարգացումներին Արցախում սովորաբար զուսպ են վերաբերվում, այդուհանդերձ, Ղարաբաղն անտարբեր չէ դրանց նկատմամբ, հատկապես եթե դրանցում ուղղակի կամ անուղղակի առնչություն կա ԼՂՀ շահերին:

***Նույն այս հիմամբ, մասնավորապես ռազմաբազայի տեղակայման վերաբերյալ ռուս-հայկական նորացված պայմանագրի առնչությամբ, փորձեցինք իմանալ ԼՂՀ Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանի տեսակետը:***

«Ռուս-վրացական պատերազմին հաջորդած օրերին զգուշորեն կանխատեսել էի, որ հնարավոր է, որ զարգացումները տանեն ռազմաքաղաքական ինչ-որ հավասարակշռության, որի համար հիմք կդառնա «ագրեսիվության լիմիտի» սպառումը Ռուսաստանի եւ Արեւմուտքի կողմից: Նկատի էր առնվում, որ Կոսովոյի ճանաչումը Միացյալ Նահանգների եւ ԵՄ առանցքային երկրների կողմից զուգակշռվել է Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ռուսաստանյան ճանաչմամբ: Եվ դրան, տրամաբանորեն, պետք է հաջորդի «լիցքաթափման» ժամանակաշրջանը»,- մեր զրույցի ժամանակ նշեց խորհրդարանականը:



Վահրամ Աթանեսյանը կարծում է, որ իր այդ կանխատեսումն արդարացավ մասնավորապես Մայնդորֆյան հռչակագրով, որով Ռուսաստանը Հայաստանի եւ Ադրբեջանի հանդեպ որդեգրեց «հավասար հեռավորության գործընկերների» քաղաքականություն: Մանավանդ որ Վրաստանի դեպքերից առաջ Բաքու էր այցելել ՌԴ նախագահ Մեդվեդեւը: Այդ այցի հիմնական թեման էր «հարաբերությունները ստրատեգիական համագործակցության մակարդակի հասցնելու» առաջնահերթությունը:

Տես էջ 2

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# Սենատոր Բոքսերի թերացումը

Ամերիկահայ համայնքը չի կարող ողջունելի համարել սենատոր Բարբարա Բոքսերի պահանջով ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի որոշումը Ադրբեջանում որպես դեսպանի Մեթյու Բրայզայի թեկնածության քվեարկության հետաձգումը, գրում է Հիլարի Քլինթոնի նախագահական ընտրարշավի նախկին ակտիվիստ եւ «Հայերը հօգուտ Օբամայի» ազգային ընկերակցության տնօրեն **Ուիլյամ Բայրամյանը**, որը Կոլումբիայի համալսարանի միջազգային հարաբերությունների բաժինն է ավարտել եւ մասնագիտացել միջազգային անվտանգության քաղաքականության ոլորտում:

Խմբագրությունում էլ. փոստով ստացված հաղորդագրության մեջ նա հիշեցնում է դեռ ԵԱՀԿ Մինսկի խմբում որպես համանախագահ Բրայզայի ադրբեջանամետ դիրքորոշումները, նրա երկար լռությունը Ջուղայում գտնվող հայկական խաչքարերի եւ գերեզմանների քանդման առիթով, եւ այն, որ կնոջ՝ Զեյնո Բարանի համագործակցությամբ նա չի կարողանում տարանջատել իր անձնական կյանքը պրոֆեսիոնալ կարիերայից: Նրա հարսանիքին ներկա է եղել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: «Այս բոլորն իմանալով, որեւէ ազնիվ սենատոր միանգամից վետո պիտի դներ Բրայզայի թեկնածությանը, բայց Բոքսերը նախընտրեց հետաձգել քվեարկությունը՝ հավանաբար հաշվի առնելով, որ ընտրությունների տարի է, եւ ինքն էլ աչնանը վերընտրվելու ենթակա է, ուստի ճիշտ չէր լինի հակառակվել իր կուսակցությանը հարող երկրի նախագահին», գրում է Բայրամյանը՝ համեմատելով նրա այդ քայլը նախագահ Օբամայի նախընտրական խոստումների հետ, որոնք նա հետագայում դրժեց:

«Ամերիկահայերը ձանձրացել են բառերից ու խոստումներից: Ընտրյալ պաշտոնատար անձինք շոշափելի գործողություններ պետք է կատարեն եւ ոչ թե խոստումներ շռայլեն», եզրակացնում է նա:

Հ. Ծ.

# Զրույցներ Թուրքիայի մասին

**«Եվրասիա» համագործակցության հիմնադրամն ու Ստամբուլի «Գլոբալ քաղաքական միտումներ» կենտրոնը՝ (GPOT) ԱՄՆ միջազգային գործակալության ֆինանսավորմամբ, կանցկացնեն Հայաստանի եւ Թուրքիայի արդի մշակութային, պատմական, քաղաքական եւ սոցիալական կառույցները ներառող դասախոսությունների շարք հայ եւ թուրք լրագրողների համար:**

**Սեպտեմբերի 2-ին կմեկնարկի Թուրքիային նվիրված դասախոսությունների շարքը, որը կտեւի մինչեւ սեպտեմբերի 15-ը: Այդ օրը Իզմիրի տնտեսագիտական համալսարանի ՋԼՄ եւ քաղաքագիտության դասախոս Ջաֆեր Յորուքը եւ Ստամբուլի Բողազիչի համալսարանի արտաքին քաղաքականության դասախոս Բեհլուլ Օզքանը միացյալ դասախոսություն կկարդան «Թուրքիայի ներքին քաղաքականության հիմունքները. Մեխանիզմներ, իշխանություն, կուսակցական համակարգ» խորագրով: Սեպտեմբերի 20-22-ը հայ փորձագետներ Հեղինե Մանասյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը կմեկնեն Ստամբուլ՝ Հայաստանին նվիրված նմանատիպ դասախոսություն կարդալու նպատակով: Դասախոսությունների նպատակն է բարձրացնել 2 երկրների լրագրողների տեղեկացվածությունը մյուս երկրի մասին, ինչը կպահովի հայ-թուրքական հարաբերությունների ավելի անաչառ լուսաբանում:**

Հ. Հ.

# Նախագահ Իլհամ Ալիեւի եւ նրա ընտանիքի անվտանգությունը վստահված է Մոսսադի աշխատակիցներին

## *Ըստ երեւույթին հենց դա է Ադրբեջանի շա՜տ լիարժեք անկախության գլխավոր առավելությունը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Օգոստոսի 27-ին «**Ազգը**», անդրադառնալով Ադրբեջանի պաշտպանության նախարարության խոսնակ Էլդար Սաբիրօղլու՝ Հայաստանի անկախությունը կասկածի տակ դնող հայտարարությանը, գրել էր. «Ադրբեջանցի հրոսակի տրամաբանությամբ, երբ խոսքը վերաբերում է ռուսական գեթ մեկ ռազմակայանի, ապա դա կաշկանդում է Հայաստանի անկախությունը, իսկ ամերիկյան ավելի քան 100 ռազմակայաններ, անշուշտ, միմիայն «ընդլայնում են» Թուրքիայի անկախությունը: Մնում է ենթադրել, որ տեղակայման դեպքում թուրքական ռազմակայանը կհամադրվի Գաբալայի ռուսական ռազմակայանի հետ, եւ Ադրբեջանը կդառնա աշխարհի «ամենաանկախ» պետությունը»:

Պարզվում է, Աղջերոն թերակղզում տեղակայված Գաբալայի ռուսական ռազմակայանը, նախքան թուրքականի հետ համադրվելը վաղուց արդեն համադրվում է Ադրբեջանի իրանական սահմանի մոտակայքում գործող իսրայելական ռազմակայանի հետ, որտեղ, ինչպես 2009-ի հունվարի 13-ի համարում նշել է «Ենի Ասիա» թերթը, տեղակայված են իսրայելական հակաօդային պաշտպանության համակարգեր:

Ի դեպ, թուրքական թերթի վկայությամբ, իսրայելական անվտանգության ծառայության գործակալություններին է անցել Բաքվի օդանավակայանի եւ Ադրբեջանի էներգետիկ բոլոր ենթակառուցվածքների անվտանգության ապահովման գործը: Հարկ է սակայն նշել, որ աշխարհում Ադրբեջանի «ամենաանկախ» պետություն դառնալու պարագայում խնդիրը սոսկ Գաբալայի ռուսական եւ ադրբեջանա-իրանական սահմանին տեղակայված իսրայելական ռազմակայանները չեն, ոչ էլ Բաքվի օդանավակայանի կամ էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանության հանձնարարումը Իսրայելի անվտանգության գործակալություններին, այլ՝ Մոսսադը:

Ինչո՞ւ: Այդ հարցին «Ենի Մուսաֆաթի» 2008-ի հուլիսի 3-ի համարում պատասխանել է թերթի հեղինակ Ջամին Հաջին, մեկնաբանելով «Մերձավոր Արեւելքի քաղաքականության վաշինգտոնյան ինստիտուտի» վերլուծականը, որը թարգմանաբար հրապարակվել է ադրբեջանական թերթում:

Տես էջ 5

# Անհայտ կորածների ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանները

Օգոստոսի 30-ը անհայտ կորածների միջազգային օրն է: Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում անհայտ կորածների հիմնախնդիրը՝ այն համարելով զինված հակամարտությունների հետեւանքով առաջացած մարդասիրական ամենալուրջ խնդիրներից մեկը:

Արցախյան պատերազմից հետո Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում դեռեւս կան ընտանիքներ, որոնք մինչեւ այսօր տեղեկություն չունեն իրենց կորած հարազատների մասին: Ղարաբաղյան հակամարտության հետեւանքով անհայտ կորած անձանց հիմնախնդիրը ԿԽՄԿ-ի ուշադրության կենտրոնում է 1992 թվականից:

Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի միջազգային կոմիտեն 2009 թվականի նոյեմբերից մինչեւ 2010-ի հունվարը Հայաստանի Հանրապետությունում իրականացրել է անհայտ կորածների ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների հետազոտություն: ԿԽՄԿ-ի աշխատակիցները Հայաստանում այցելել են անհայտ կորածների 104 ընտանիքների: Ըստ հետազոտության տվյալների՝ անհայտ կորածների ընտանիքների մեծամասնությունը գոյատեւում է վատ կամ շատ վատ բնակարանային պայմաններում: Անհայտ կորածների ընտանիքների ամենախոցելի խումբը գյուղերում բնակվող կին կերակրողների գլխավորությամբ բազմազավակ ընտանիքներն են, որոնց ծախսերը գերազանցում են եկամուտներին: Խոցելի մեկ այլ խումբ են ներկայացնում քաղաքներում ու գյուղերում բնակվող այն ընտանիքները, որոնց եկամտի միակ աղբյուրը նպաստներն են: Քաղաքներում բնակվող այդ ընտանիքների 45 տոկոսն ունի պարտք-եկամուտ հարաբերակցության բարձր գործակից. նրանց պարտքի միջին չափը կազմում է գրեթե 7 ամսվա եկամուտը: Գյուղերում բնակվող ընտանիքների 80 տոկոսն էլ բնակվում է վատ կամ շատ վատ պայմաններում, իսկ պարտքերի չափը կազմում է նրանց 6 ամսվա եկամուտը:

Անհայտ կորածների հարազատների 3-րդ խոցելի խումբը միայնակ տարեցներից կազմված ընտանիքներն են, որոնք ունեն կուտակված պարտքեր, եւ նրանց պարտք-եկամուտ հարաբերակցության գործակիցն ամենաբարձրն է: Միայնակ տարեցների պարտքերը կազմում են նրանց 10 ամսվա եկամուտը: Այդ պարտքերը գոյացել են առողջապահական ծախսերը հոգալու նպատակով: Որպես անհայտ կորածների հարազատներ նպաստ ստանում է միայնակ տարեցների միայն 40 տոկոսը:

Հարազատների անհետացման պատճառով ընտանիքները բախվում են ֆինանսական ու հոգեբանական տարբեր խնդիրների հետ: Չունենալով ֆինանսական միջոցներ՝ շատ ընտանիքներ հարազատներին փնտրելու նպատակով անգամ վաճառել են իրենց բնակարանները: Որքան էլ ցավալի է, իրենց ակտիվները վաճառելուց հետո էլ մարդիկ հարազատներին գտնել չեն կարողացել: Կորցնելով ունեցվածքը՝ ընտանիքները հայտնվել են սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում: Ըստ հետազոտության՝ անհայտ կորածների ընտանիքների 15-20 տոկոսը 2009 թվականին հարազատներին փնտրելու նպատակով դեռ շարունակել է գումար ծախսել: Առհասարակ, գյուղերում բնակվող ընտանիքները 2 անգամ ավելի շատ գումար են ծախսել, քան քաղաքներում բնակվողները: Այդ գումարները հիմնականում ծախսվել են Երեւան հասնելու եւ ԿԽՄԿ-ից ու պետական մարմիններից տեղեկություններ ստանալու համար:

Ելնելով հետազոտման արդյունքներից՝ ԿԽՄԿ-ն անհայտ կորածների ընտանիքներին աջակցելու նպատակով պետական մարմիններին առաջարկում է, օրինակ՝ մտածել անհայտ կորածների ընտանիքներին տրամադրվող նպաստներն ավելացնելու մասին: Անարդարացի է, որ այդ նպաստները ներկայումս հասանելի են միայն անհայտ կորած զինվորականների ընտանիքների համար: Անհայտ կորած քաղաքացիականների ընտանիքներին նպաստ տրամադրելու ուղղությամբ եւս հարկավոր է մտածել: Հայաստանի կառավարությունը տարբեր կերպ է դիտարկում զինվորականների ու քաղաքացիականների ընտանիքները եւ ավելի շատ ֆինանսական աջակցություն տրամադրում անհայտ կորած զինվորականների ընտանիքներին:

Ըստ բնակավայրերի՝ ԿԽՄԿ-ն ուսումնասիրել է անհայտ կորածների ընտանիքների ապրուստի միջոցները: Հետազոտության համաձայն՝ նվազագույն եկամուտ ունեն միայնակ տարեցների, միայն նպաստ ստացողների եւ կին կերակրողի գլխավորությամբ բազմազավակ ընտանիքները: Գյուղերում այս խմբերը գոյատեւում են ծայրահեղ աղքատության մեջ. նրանց ամսական եկամուտը կազմում է 50-75 հազար դրամ:

Որպես ամփոփում հետազոտության վերջում նշված է, որ աշխատանք չգտնելը, բնակարանային վատ պայմանները, պարտքերն ու առողջապահական ծախսերը անհայտ կորածների ընտանիքների համար շարունակում են մնալ սոցիալ-տնտեսական դժվարին խնդիրներ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Ռուսաստանը՝ Հայաստանի, Թուրքիան՝ Ադրբեջանի անվտանգության երաշխավորնե՞ր

1-ին էջից

**Պատգամավորի համոզմամբ՝ անցած երկու տարիներին ռուս-ադրբեջանական հարաբերությունները վերելք են ապրել: Ինչ-որ տեղ Ադրբեջանը նույնիսկ «նախանձել» է Արեւմուտքի հետ հարաբերություններում: Հավանաբար դրա պատճառը Ռուսաստանից Ղարաբաղյան կարգավորման հարցում ունեցած ակնկալիքն էր: Իսկ այսօրվա իրավիճակի համար Ադրբեջանը որեւէ մեկին «պահանջներ ներկայացնելու» իրավունք չունի:**

**«Հայ-ռուսական արձանագրությունը պարզապես հայ-թուրքական սահմանների չբացման այլընտրանքն է: Իսկ Ադրբեջանը չի թաքցնում, որ դա տեղի է ունեցել իր «սկզբունքային դիրքորոշման շնորհիվ»: Այդ «սկզբունքայնությունը» բերել է նրան, որ Հարավային Կովկասում ուրվագծվում է «երաշխավորության» հիման վրա Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ դերաբաշխման հեռանկարը»,- ասում է Վահրամ Աթանեսյանը:**

**Ավելի պարզ, ըստ նրա, Ռուսաստանը ստանձնում է Հայաստանի, Թուրքիան՝ Ադրբեջանի անվտանգության երաշխավորի դերակատարություն: Իսկ դա ներկա իրավիճակի պահպանման ամենահնարավոր տարբերակն է: Անհավանական է, որ Թուրքիան ու Ռուսաստանը Կովկասում եւս մի պատերազմ են մղելու: Նույնքան անհավանական է, որ երաշխավորներից որեւէ մեկը զոհաբերելու է երաշխավորյալի շահերը: Ահա եւ ստացվում է, որ ստատուս քվոն փոխելու ցանկություն չկա:**

**Վահրամ Աթանեսյանը գտնում է, որ Բաքվում սպասում են, որ Մեդվեդեւը կժամանի եւ չի առարկի, որ Նախիջեւանում թուրքական ռազմաբազա տեղակայվի:**

**«Թվում է, սակայն, որ Մոսկվան աշխատում է այլ սցենարով: Խոսք կա, որ Ռուսաստանն Ադրբեջանին C-300 կայանքներ վաճառելու հարցում նախապայման ունի՝ որպեսզի դրանք գտնվեն ռուսաստանցի զինվորականների ենթակայության տակ: Ըստ էության, դա ռազմաբազա ունենալու նախապայման է: Եվ եթե ադրբեջանական ոչ իշխանամետ մամուլի տեղեկությունները թեկուզ եւ մասամբ համապատասխանում են իրականությանը, ապա Մեդվեդեւի այցը շատ հետաքրքրական զարգացումների նախանշան ունի: Բոլորովին էլ պատահական չէ, որ Ադրբեջանում բավական բարձր, նախագահի աշխատակազմի մակարդակով հայտարարվում է, թե իրենք մտադիր չեն անդամակցել ոչ ՆԱՏՕ-ին, ոչ ՀԱՊԿ-ին», եզրակացնում է խորհրդարանի անդամը:**

**Վ. Աթանեսյանը բացառում է Ադրբեջանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցությունը: Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ին, ապա նրա կարծիքով՝ այստեղ Ադրբեջանն առեւտրի տեղ կարծես թե ունի, եւ թերեւս այդ համատեքստում էր ՌԴ արտգործնախարար Լավրովը խորհուրդ տալիս, որ «սանկտպետերբուրգյան գաղափարն ընդունվի»:**



# Ռասել (Ռազմիկ) Գաստարյան

Իննսունմեկ տարեկանում Պրովիդենսում վախճանվել է հայկական ռադիոժամի 60-ամյա հաղորդավար-մեկնաբան, պրոդյուսեր եւ ռեժիսոր Ռասել (Ռազմիկ) Ալենքի Գաստարյանը: Այս մասին տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը՝ լուրը քաղելով «Պրովիդենս ջոռնըլ» պարբերականից:

Ռազմիկ Գաստարյանը ծնվել էր Հալեպում (Սիրիա) 1918-ին, վերապատվելի Եղիշե եւ Նեկտար Գաստարյանների ընտանիքում: 1947-ին, առանց հեռասփռման ոլորտի որեւէ՝ թեկուզ նախնական կրթություն ունենալու, նա Պրովիդենսում հիմնել է հայկական ռադիոժամը, որը ճանաչված է Նյու Յորքի եւ Կալիֆոռնիայի հեռուստառադիոընկերությունների կողմից որպես ամենաերկարամյա էթնիկական ծրագիրը Մ. Նահանգներում: Նա նաեւ հիմնել է «4-աստղանի ստեղծագործություններ» ոսկերչական նախագծումների եւ արտադրության ընկերությունը Պրովիդենսի Օլնիվիլ հրապարակում: Ամուսնացած էր Էլիզաբեթ Մուրադյանի հետ եւ ուներ երեք զավակ ու չորս թոռ:

Հ. Ծ.



# Orange-ը սահմանում է նոր չափանիշ գերարագ շարժական ինտերնետի ոլորտում

## Ամենաարագ Ինտերնետ Հիմա մոդեմներն արդեն վաճառքում են

**Այսօր Orange-ը մեկնարկեց իր նոր Ինտերնետ Հիմա 14.4 մոդեմների վաճառքը, որոնք հնարավորություն են ընձեռում կատարելու բեռնումներ համացանցից մինչեւ 14.4 Մբ/վ տեսական արագությամբ: Այս նոր մոդեմների մեկնարկով, ինչպես նաեւ վերազինված ամենաարդիական 3G+ ցանցի շնորհիվ Orange-ն արագության եւ որակի նոր չափանիշներ է սահմանում հայաստանյան շարժական ինտերնետի շուկայում:**

**դյունքները անմիջապես հասանելի դառնան մեր բաժանորդների համար: Այս մոդեմներով մենք հնարավորություն ենք տալիս Երեւանի, Գյումրիի եւ Վանաձորի մեր բաժանորդներին արդեն իսկ օգտվելու այդ աներեւակայելի արագություններից: Եվ ինչպես միշտ, մենք հավատարիմ ենք մեր՝ «գերարագ ինտերնետը բոլորի համար է» կարգախոսին, որի շրջանակներում առաջարկվող նոր արագությունը նախատեսված է**








**Վերջին մի քանի ամիսներին Orange-ի 3G+ ցանցում կատարված մեծածավալ հզորացման աշխատանքների շնորհիվ Հայաստանի երեք մեծ քաղաքներում՝ Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում տվյալների փոխանցման արագությունը հնարավոր է դարձել հասցնել տեսականորեն մինչեւ 14.4 մեգաբիթ/վայրկյանի: Ինտերնետ Հիմա 14.4 նոր մոդեմների շնորհիվ Orange-ն իր գերարագ ինտերնետի բաժանորդներին առաջարկում է արագության միանգամայն նոր փորձառություն եւ ինտերնետ կապի որակ: Կատարյալ պայմաններում Ինտերնետ Հիմա 14.4 մոդեմի շնորհիվ այսուհետեւ կարելի է տվյալներ բեռնել 7-9 մբ/վրկ արագությամբ: Միջինում բաժանորդները կունենան 2-5 մբ/վրկ արագություն, ինչը հնարավորություն կտա նրանց հաշված վայրկյանների ընթացքում բեռնելու երաժշտություն, ֆիլմեր, ծրագրեր, ինչպես նաեւ ֆիլմեր դիտելու ինտերնետում առանց ընդհատումների, նույնիսկ HD որակով:**

**«Այսօրվա առաջարկով մենք նոր չափանիշ ենք սահմանում հայաստանյան շարժական ինտերնետի ոլորտում: Որպես հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերություն՝ մեր պարտականությունն ու կոչումն է թվային աշխարհի հնարավորությունները հասանելի դարձնել մեր հաճախորդներին, առաջարկել նրանց լավագույն որակ եւ նորագույն տեխնոլոգիաները: Մենք երբեւէ կանգ չենք առնում մեր ձեռքբերումների վրա, եւ բարելավելով մեր կողմից ներկայումս առաջարկվող ինտերնետի որակը՝ շարժվում ենք առաջ՝ առաջարկելով նոր արագություններ եւ որակ», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:**

**Նոր 3G մոդեմները կարելի է ձեռք բերել ինչպես մեկ տարվա բաժանորդագրությամբ, այնպես էլ առանց բաժանորդագրության: Մեկ տարով բաժանորդագրվելու դեպքում Ինտերնետ Հիմա 14.4 մոդեմը կարժենա 15,000 դրամ, իսկ մոդեմն առանց մեկ տարվա պայմանագրի գնելու դեպքում՝ 37,000 դրամ:**

**«Մեզ համար կարեւոր է, որ ցանցի տեխնոլոգիական վերազինման արդյունքները... Orange-ի ինչպես նոր, այնպես էլ հին բաժանորդների համար: Ինտերնետ Հիմա 7.2 մոդեմ ունեցող բաժանորդները կարող են ցանկացած պահի վերադարձնել իրենց հին մոդեմը եւ ստանալ նոր, արագություններ ապահովող մոդեմը՝ վճարելով վերջինիս համար նախատեսված 15,000 դրամը եւ երկարացնելով պայմանագրի գործողության ժամկետը», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:**

**Նոր մոդեմի մեկնարկին զուգահեռ Orange-ը վերանայել է նաեւ Ինտերնետ Հիմա 7.2 մոդեմի վաճառքի գինը. այն այսուհետեւ կարելի է ձեռք բերել առանց մեկ տարվա բաժանորդագրության, ընդամենը 24,000 դրամով նախկին 35,000-ի փոխարեն:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Քաղաքական աշունից մեկ օր առաջ

## Արձանագրությունները մեռան, կեցցեն արձանագրությունները

Մեկ տարի առաջ՝ հենց այս օրը հանրությանը մատուցվեցին հայ-թուրքական արձանագրությունները: Դրանք քաղաքական ցունամի առաջացրին, երկար ժամանակ (մոտ մեկ տարի) քաղաքական միտքը կենտրոնացրին հայ-թուրքական հարաբերությունների ուղղությամբ, անգամ Հայաստանի քաղաքական կոալիցիան նվազեցրին եւս մեկով: Ոմանք այս արձանագրությունների նախաձեռնումը համարեցին Հայաստանի ներքին խնդիրներից, մարտի 1-ից հայ հանրության ուշադրությունը շեղելու միջոց, ուրիշները՝ Սերժ Սարգսյանի նախաձեռնողական քաղաքականություն, երրորդները նոր մոտեցումների ձեւավորման՝ կուլ գնացած, բայց հոգեբանական ազդակի եւ մտածողության կարծրատիպը կոտրելու իր դերը կատարած քայլ. այսպես թե այնպես՝ արձանագրություններն այժմ կասեցված են, իսկ դրանց քննարկումները հասարակության համար շատ վարագույրներ հետ քաշեցին՝ քաղաքական շրջանակների իրական դեմքը տեսնելու առումով: Այժմ հայ-թուրքական խոսքուզրույցին փոխարինելու է եկել հայ-ռուսական խոսքուզրույցը. առա՛ջ:

### Արցախի անկախության օրը ՀՅԴ-ի համար լավ առիթ է

Սեպտեմբերի 2-ին Երեւանի «Դինամո» մարզասրահում ՀՅԴ-ն կազմակերպում է ժողովրդային հանդիպում-տոնախմբություն՝ նվիրված Արցախի անկախության օրվան: Երեկ հրավիրված հարցազրույցում ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանը** նկատել է, թե ԼՂ անկախության օրը նշելը ոչ միայն լավ առիթ է, այլեւ անցած տարին գնահատելու հնարավորություն. «Որքանո՞վ մոտեցանք մեր խնդիրների լուծմանը, ի՞նչ նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ են առաջացել... Հիմա ակնհայտ է, որ ամենագլխավորը դարձյալ Ղարաբաղի հարցն է: Ակնկալվում են ինչ-որ համաձայնություններ՝ հնարավոր սկզբունքների շուրջը, դրանց հիման վրա ինչ-որ ամբողջական փաթեթ, այսինքն՝ ավելի կոնկրետ են դարձել խնդիրները: Այդ խնդիրների հետ կապված, բնականաբար, պետք է վերացվի շփոթը, որ գոյություն ունի հասարակության մեջ», ասել է նա՝ նշելով, թե հավաքի ընթացքում բարձրաձայնվելու են վտանգներն ու սպառնալիքները: Ըստ Ռուստամյանի՝ ղարաբաղյան հիմնախնդիրը հայ ժողովրդի օրակարգի ամենակարեւոր հարցերից է, որն ուղղորդում է թե՛ մեր արտաքին, եւ թե՛ ներքին քաղաքականությունը: Նշելով քաղաքական երկու մոտեցման մասին այս խնդրում՝ ա) զիջենք, որ զարգանանք, բ) զիջելու դեպքում կորցնելու ենք մեր ազգային պետության հեռանկարն ընդհանրապես, ՀՅԴ-ն, ըստ Ա. Ռուստամյանի, առաջարկում է զարգանալ եւ չզիջել: Իսկ այդ երկու խնդիրը միաժամանակ լուծելու համար հասարակական համախմբումն է պետք, մինչդեռ, ըստ ՀՅԴ ԳՄ ներկայացուցչի, հասարակության մեջ առայժմ համախմբման մթնոլորտ չկա:

### Դալլաքյանը կուսակցություն չի՞ ստեղծում

Մամուլում տարածված լուրերի համաձայն՝ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը կուսակցություն է ստեղծում: Այդպիսի կուսակցության նպատակը, ըստ վերլուծաբանների հասարակության ընդդիմադիր էլեկտորատի այն ազատ մնացած շերտերի գրավումն է, ովքեր չեն վստահում ոչ առկա ընդդիմությանը, ոչ իշխանությանը: Վ. Դալլաքյանը, սակայն, մեր զանգին ի պատասխան կտրականապես ժխտեց լուրը. «Այ մարդ, ես Կիրովականի գետում ինձ համար լողանում եմ, լրագրողները ինչ ասես չհորինեցին իմ մասին», զարմացավ լոռեցի պատգամավորը՝ ավելացնելով, թե լրագրողների մի խումբ կա՝ մարդը մեռնի, չեն իմանա, բայց այդ նույն մարդու մասին ինչ ասես գրում են»: Նա խոստացավ սեպտեմբերի 14-ին կայանալիք ԱԺ նիստի ընթացքում պատասխանել լրագրողների բոլոր հարցերին, քանի որ ամեն օր այս լուրերի առիթով իրեն զանգում են: Ժխտելը՝ ժխտենք, բայց ծուխն առանց կրակ չի լինում...

Ի դեպ, Ազգային ժողովի աշնանային նստաշրջանի ե՛ւ առաջին նիստը, ե՛ւ հավանաբար երկրորդ նիստը կգումարվեն կառավարության՝ Մելիք-Ադամյան փողոցում գտնվող նիստերի դահլիճում, քանի որ նորոգված եւ օվալաձեւ ԱԺ նիստերի դահլիճում սարքավորումների տեղադրման հարցը դեռեւս չի լուծվել: Դեռ երկու նիստ տանջվելու ենք հին խորհրդարանի անակուստիկ դահլիճում:

### ԼՂՀ արտգործնախարար. «Լավ չենք օգտագործում սփյուռքի ներուժը

Ի՞նչ անելիքներ ունի այս պահին ղարաբաղյան դիվանագիտությունը ԼՂՀ ճանաչման իրավական, քաղաքական եւ բարոյական հիմքերը միջազգային հանրությանը ցույց տալու ուղղությամբ հարցին պատասխանելով՝ ԼՂՀ արտգործնախարար **Գեորգի Պետրոսյանն** ասել է, թե ԼՂՀ անկախության ճանաչմանն ուղղված ջանքերը պետք է առավել ակտիվ եւ համակարգված լինեն, իսկ այդ գործում մեծ դեր է պատկանում ինչպես Հայաստանին, այնպես էլ «Սփյուռքին»: Գ. Պետրոսյանը նախ թվել է այս ուղղությամբ ներկայացուցչական մարմինների ջանքերը, ապա ավելացրել. «Անկասկած, մեր քարոզչական գործունեությունն ուժեղացնելու խնդիր ունենք, կարեւոր է, որ քարոզչությամբ զբաղվեն մարդիկ, ովքեր ազգային գաղափարախոսության կրողներն են»: Ըստ Ղարաբաղի արտգործնախարարի՝ Ղարաբաղն ու Հայաստանը բարդ իրավիճակում են, հայությունն ընդհանուր առմամբ ներքաշված է քարոզչական պատերազմի մեջ. «Մի կողմից մենք ունենք իրական հակառակորդներ՝ Ադրբեջանն ու Թուրքիան, մյուս կողմից՝ գոյություն ունեն ուժեր, որոնք հետապնդում են իրենց շահերը, իրենց քարոզչությունն ուղղում են մեր դեմ»: Արտգործնախարարի կարծիքով՝ նավթային դիվանագիտության հնարավորություններ հայերս չունենք, սակայն ունենք սփյուռք, որի ներուժը լավ չի օգտագործվում (աղբյուր՝ «Ազատ Արցախ»):

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

---

ԼՈՌԻ

# Աֆրիկյան ժանտախտի բռնկում Լորուտ եւ Մարց համայնքներում

## Լոռու մարզպետը հայտարարել է արտակարգ իրավիճակ եւ կարանտին

Արդեն մի քանի օր Լոռու մարզում դարձյալ մոլեգնում է խոզերի աֆրիկյան ժանտախտը: Հիշեցնենք, որ այս տարի առաջին դեպքը գրանցվել է մարտի 18-ին Դսեղ համայնքում: Այս անգամ բռնկումներ են եղել Լորուտ եւ Մարց համայնքներում: Պարզաբանումներով հանդես գալու եւ լուծման ուղիներ նախանշելու նպատակով օրերս Լոռու մարզպետ **Արամ Քոչարյանի**՝ «Լոռու մարզի խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության կանխարգելման միջոցառումների մասին» որոշման համաձայն, հրավիրվել էր «Խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության տեղական հակահամաճարակային արտակարգ հանձնաժողովի» նիստը: Նիստը վարում էր Արամ Քոչարյանը, որը գլխավորում է նաեւ վերոնշյալ հանձնաժողովը: Լորուտ եւ Մարց համայնքներում արձանագրված դեպքերը ներկայացրեց սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի պետ **Համլետ Վիրաբյանը**: Նա տեղեկացրեց, որ Լորուտ եւ Մարց համայնքներում խոզերից վերցված փորձանմուշներով օգոստոսի 27-29-ին կատարված փորձաքննության արդյունքները հաստատել են հիվանդության նոր բռնկումը: Անմիջապես դեպքի վայր են մեկնել տեսչության անասնաբուժության բաժնի պետը եւ տեսուչները:

Համայնքի ղեկավարի հետ Լորուտում անկած եւ հարկադիր ոչնչացված 120 գլուխ եւ Մարցում՝ 40 գլուխ խոզ է վնասազերծվել (թաղվել են խոր փոսերում, տարածքը ախտահանվել է)՝ վարակի տարածումը կանխելու նպատակով: Համլետ Վիրաբյանը մատնանշեց մի շարք խնդիրներ, որոնցից առաջինը մասնագետ անասնաբույժների պակասն է, բնակիչների անհանդուրժողականությունը եւ դեպքերը թաքցնելը, համայնքի ղեկավարների թերացումները, վերջապես տեխնիկայի ու ֆինանսական միջոցների սակավությունը՝ գործընթացն արագ ու արդյունավետ կազմակերպելու առումով: Լոռու մարզպետը խոստացավ վերջին հարցի կապակցությամբ դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ խնդրելով աջակցություն: Մնացած խնդիրների կապակցությամբ մարզպետը նշեց.

- Համայնքների ղեկավարներն օրենսդրությամբ եւ կառավարության որոշմամբ խնդրի թիվ 1 պատասխանատուներն են: Առաջին հերթին իրենք պետք է շահագրգիռ լինեն հարցը կարգավորելու համար, ոչ թե լրացուցիչ խոչընդոտներ առաջացնեն,- ասաց նա:

Ա. Քոչարյանը մարզում արտակարգ իրավիճակ եւ նշված համայնքների տարածքում կարանտին հայտարարեց՝ կոչ անելով մշակել եւ իրականացնել գործողությունների հստակ ծրագիր:

Հ. Վիրաբյանն իր հերթին կոչ արեց չթաքցնել խոզերի անկման եւ հիվանդության կասկածի որեւէ դեպք, իսկ խոզաբուծությամբ զբաղվողներին հորդորեց խոզերը միաժամանակ պահել փակ տարածքներում, ինչը հիվանդությունից խուսափելու միակ միջոցն է: Նա հավաստեց, որ մարզկենտրոնի մսի կետերում վաճառվում է բացառապես ստուգված մսամթերք՝ հորդորելով խուճապի չմատնվել: Լոռու մարզպետը հանձնարարեց առավել ուժեղացնել վաճառվող մսամթերքների վերահսկողությունը:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
Վանաձոր

---

# Տիգրանակերտում հայտնաբերվել են պարթեւական ժամանակաշրջանի պղնձե մետաղներ

«Ե՞րբ եք ավարտելու Տիգրանակերտի պեղումները» հարցը գրեթե ամեն օր տալիս են Արցախի հնագիտական արշավախմբի ղեկավար **Համլետ Պետրոսյանին**: Նրա պատասխանն էլ հետեւյալն է՝ «Իսկ դրա կարիքը կա՞: Ամեն տարի նոր իրեր, նոր մշակույթ ու հնագիտական նոր արժեքներ ենք բացահայտում»:

Այս տարի շուրջ երկու ամիս տեւած պեղումների արդյունքներից Պետրոսյանը գոհ է: Աշխատանքն արդյունավետ էր, գտածոները՝ թանկարժեք, հետագա աշխատանքն էլ այնքան շատ, որ միայն փետրվարին կհասցնեն ներկայացնել այս տարվա պեղումների հաշվետվությունը:

Թեպետ Տիգրանակերտը երբեւէ Արցախի մայրաքաղաք չի համարվել, սակայն հնագիտական արժեքներով ու կառույցներով հարուստ քաղաք է: Համլետ Պետրոսյանն ուշադրության է հրավիրում սպիտակ գույնին ու հավելում, որ շինությունները կառուցված են կրաքարից. հետեւաբար Տիգրանակերտը կարելի է անվանել նաեւ սպիտակ քաղաք:

Հունիսին մեկնարկած պեղումները հիմնականում ընթացել են միջնաբերդում, Ամրացված թաղամասի հյուսիսային պարսպապատի տարածքում, կենտրոնական թաղամասում (բազիլիկ տաճարի տարածք):

Միջնաբերդում հայտնաբերած իրերից հնագետն առանձնացնում է գունազարդ խեցեղենն ու սկյութական տիպի արդեն երրորդ նետասլաքը:

Բազիլիկ եկեղեցում հայտնաբերել են անոթներ, ապակե ապարանջաններ: «Սակայն ամենաէական



գյուտը 10-11-րդ դդ. խաչքարն է, որը ոչ միայն հավաստում է հայի ինքնության ակնհայտ առկայությունը Տիգրանակերտում, այլեւ փաստում, որ 9-րդ դարում՝ համեմատական անկումից հետո, եկեղեցու մի հատված վերականգնվել է եւ ծառայել իբրեւ մատուռ, որից դեպի արեւմուտք էլ խաչքար է կանգնեցվել», ասաց Համլետ Պետրոսյանը «Արմաս» ակումբում:

Տիգրանակերտի անտիկ թաղամասում պեղվել է ավելի քան 2 տոննա տարողություն ունեցող օձազարդ կարաս, որը վերականգնելուց հետո կդառնա նորաստեղծ թանգարանի ամենաուշագրավ ցուցանմուշներից մեկը: Իսկ անտիկ դամբարանադաշտերից մեկում հնագետները հայտնաբերել են երկու կարասային թաղումներ, որոնցից մեկում զարդերի ու երկաթյա ակնազարդ մատանիների, ոսկեզօծ ուլունքների հետ գտնվել են նաեւ պղնձե դրամներ:

«Ակնկալիքներ ունենք, որ կգտնենք նաեւ Տիգրան Մեծի ժամանակաշրջանի դրամներ», ասաց նա: Հնագետի հավաստմամբ՝ պղնձե դրամների վրա աղոտ կերպով նշմարելի է արքայի գլուխը, իսկ չափսերից դատելով՝ պարթեւական ծագում ունեն: Սակայն Պետրոսյանն առաջարկում է մի փոքր սպասել ու դրամի ծագման ստույգ ժամանակաշրջանի ու պատկանելության վերաբերյալ հարցերին պատասխանել դրամի մաքրման գործընթացից հետո:

Տիգրանակերտում հայտնագործված բազմաթիվ գտածոներ այժմ պահվում են ԵՊՀ հնագիտության լսարանում: Արցախում պահոցի կառուցման աշխատանքների վերջին փուլն է ընթանում. ավարտին գտածոները կտեղափոխվեն Ստեփանակերտ:

Տիգրանակերտի վերաբերյալ հասարակական արձագանքը հսկայական է: Միայն Արցախի հեռուստատեսությունը երեք անգամ անդրադարձել է հնագետների աշխատանքին: Օրական ավելի քան հարյուր զբոսաշրջիկ է այցելում Տիգրանակերտ, անտիկ ժամանակաշրջանի քաղաք այցելությունը դարձել է յուրատիպ ուխտագնացություն: Դա ունի իր դրական կողմերը, սակայն բացասականը նույնպես ակնառու է: Համլետ Պետրոսյանը պատմում է, որ բազմաթիվ զբոսաշրջիկներ այցելում են Տիգրանակերտ, շրջում եւ ձեռքի հետ մի քանի քար վերցնում որպես մասունք՝ առանց գիտակցելու, որ դրանք հնագիտական մեծ արժեք են ներկայացնում եւ պետք է պահվեն հատուկ վայրերում: Թեպետ թանգարանը պահակ ունի, այնուամենայնիվ հնագետը բարձրացնում է Տիգրանակերտի պահպանության հարցն ու հավելում, որ արշավախումբը ծրագրել է ստենդներ պատրաստել ու այցելուներին զգուշացնել, որ տարածքը հուշարձանների պահպանման ցանկում է գտնվում, եւ արգելվում է որեւէ ցուցանմուշ վերցնել:

Խոսակցությունները, որ Տիգրանակերտի պեղումներն անցկացվում են ազատագրված տարածքներից մեկում, եւ գուցե դրանք վերադարձվեն ադրբեջանական կողմին, Համլետ Պետրոսյանը լուրջ չի ընդունում: «Այդ կապակցությամբ որեւէ մտահոգություն չունեմ», շեշտեց նա՝ հավելելով, որ Տիգրանակերտում պեղումներ իրականացնելու համար ֆինանսական օժանդակություն են ստանում Արցախի հանրապետությունից, ինչը հերթական անգամ փաստում է արցախցիների արդեն ամրագրված կարծիքը՝ ոչ մի թիզ հող:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Անդրադարձ

# «Բռնեք գողին»

## Կամ ԱԳՆ գործունեությանը նախկին նախարարի տված գնահատականների շուրջը

Սեպտեմբերի 14-ին Նյու Յորքում մեկնարկում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի (ՄԱԿ ԳԱ) 65-րդ նստաշրջանը: Այս իրադարձությունը հայ հանրության ուշադրությանն արժանացել է առայժմ մեկ պատճառով՝ նստաշրջանի օրակարգում է Ադրբեջանի առաջարկած «Իրավիճակը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» բանաձեւի նախագծերը:

Դա եւ Վրաստանի առաջարկած «ՎՈՒԱՄ-ի տարածքում ձգձգված հակամարտությունները եւ դրանց հետեւանքները միջազգային խաղաղության, անվտանգության եւ զարգացման համար» բանաձեւի նախագիծը ՄԱԿ ԳԱ 65-րդ նստաշրջանին ժառանգություն են մնացել ընթացիկ նստաշրջանից: Այսինքն՝ եղել են ԳԱ 64-րդ նստաշրջանի օրակարգում, բայց առանց քննարկվելու, մեխանիկորեն տեղափոխվել են 65-րդ նստաշրջանի օրակարգ (այդպիսին է ընթացակարգային պահանջը):

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում Ադրբեջանն ակտիվանալ սկսել է 2004 թվականից՝ ՄԱԿ ԳԱ 59-րդ նստաշրջանի օրակարգ մտցնելով կետ՝ «Իրավիճակն Ադրբեջանի օկուպացված տարածքներում»: (Հաջորդիվ Ադրբեջանը հեղինակեց «Հրդեհները Ադրբեջանի օկուպացված տարածքում» բանաձեւի նախագիծը, որը քաղաքական բնույթի հայտարարություններ չպարունակելու եւ հումանիտար նշանակություն ունենալու համար Հայաստանի կողմից հակազդեցության չարժանացավ): Մյուս կողմից էլ՝ Վրաստանը շրջանառության մեջ դրեց «Սառեցված հակամարտությունները ՎՈՒԱՄ-ի տարածքում» հարցը: Այդ հարցերն այդ ժամանակվանից ի վեր՝ տարբեր հերթականությամբ, սկսեցին նստաշրջանից նստաշրջան «թափառել» ՄԱԿ ԳԱ օրակարգում:

ՄԱԿ ԳԱ 62-րդ նստաշրջանում ի վերջո Ադրբեջանին հաջողվեց անցկացնել «Իրավիճակը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» բանաձեւը: 2008 թվականի մարտի 14-ին տեղի ունեցած քվեարկության ժամանակ «կողմ» հանդես եկան 39 երկիր, «դեմ»՝ 7-ը, «ձեռնպահ»՝ 150-ը: Այն ժամանակ եւ այսօր որեւէ մեկը կասկած չուներ, որ Ադրբեջանն օգտվել էր Հայաստանի հետընտրական զարգացումների ֆոնից: Բայց եւ այնպես, քվեարկության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ Ադրբեջանին սատարել էին ՎՈՒԱՄ եւ Իսլամական կոնֆերանսի կազմակերպության (ԻԿԿ) գծով Ադրբեջանի դաշնակիցները: Մինչդեռ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները ոչ միայն «դեմ» էին քվեարկել, այլեւ զգուշացրել էին հակամարտության բովանդակության խեղաթյուրման ու միակողմանի ներկայացման մասին:

Ընդհանրապես, ՄԱԿ ԳԱ բանաձեւերի ու դրանց ընդունման մասին խոսելիս, անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի կարեւոր օրինաչափություն:

Նախ՝ ԳԱ բանաձեւերը պարտադիր իրավական բնույթ չեն կրում: Դրանք քաղաքական ակցիա են, առանձին հարցերում դաշնակիցների միջեւ համերաշխության հավաստում, որոնք սակայն ակտիվ օգտագործվում են քարոզչական նպատակներով: Լավագույն օրինակն այս առումով Իսրայելն է: ՄԱԿ ԳԱ գրեթե բոլոր նստաշրջաններում մեկ տասնյակից ավելի բանաձեւեր են ընդունվում՝ կապված հարեւանների հետ Իսրայելի ունեցած խնդիրների հետ, եւ գրեթե բոլոր դեպքերում դրանք հակաիսրայելական բնույթ են կրում: Բայց փաստն այն է, որ արդեն մի քանի տասնամյակ ո՛չ Գոլանի բարձունքներն են ազատված, ո՛չ Պաղեստինի խնդիրն է լուծված եւ ո՛չ էլ Երուսաղեմի կարգավիճակն է հստակեցված: Ադրբեջանի պարագայում եւս արդյունքը նույնն է՝ հակամարտության կարգավորման վրա այդ որոշումներն ազդեցություն չեն ունենում, բայց դրանց վրա հղումով հակահայկական քարոզչության երկրաչափական պրոգրեսիայով ինտենսիվացումը գնալով դժվարացնում է այդ լուծումը (հավանաբար Ադրբեջանը ցանկանո՞ւմ է հակամարտությունների «կարգավորման» մերձավորարեւելյան մոդելը տեղայնացնել Կովկասում):

Երկրորդ՝ ՄԱԿ ԳԱ-ում ձայների բաշխվածությունը (192 անդամ երկրներից յուրաքանչյուրն ունի մեկ ձայն), շահերի բազմազանությունը ու հատկապես որոշումների ընդունման պարզ մեխանիզմները հնարավորություն են ընձեռում ամենատարբեր հարցերում անխոչընդոտ որոշումներ անցկացնելու: Ինչպես ցույց է տալիս փորձը, տեսականորեն բոլոր երկրներն էլ կարող են ՄԱԿ ԳԱ օրակարգ ներմուծել սեփական ընկալումներին համահունչ բանաձեւերի նախագծեր ու որոշակի ժամանակահատված սպասելով, օգտվելով հարմար կոնֆիգուրացիայից, դրանք անցկացնել: Օրինակ՝ Վրաստանի առաջարկած «Աբխազիայից ներքին տեղահանվածների ու փախստականների մասին» բանաձեւը 2008 թվականի ապրիլի 15-ին ընդունվել է ձայների 14 «կողմ», 11 «դեմ, 105 «ձեռնպահ» հարաբերակցությամբ (որպես կանոն քվերակության նման արդյունքներ գրանցվում են Վրաստանի ու Ադրբեջանի առաջարկած հարցերով):

Այսինքն՝ ՄԱԿ ԳԱ-ից որոշում կորզելու համար բավարար է մի խումբ համախոհներ գտնել ու սպասել հարմար ժամանակի: Սա արդեն ուղղակիորեն առնչվում է ՄԱԿ ԳԱ-ում արձանագրվող երրորդ օրինաչափությանը՝ կայուն շահերի խմբերի առկայությանը: Որպես կանոն ԻԿԿ անդամները (59 երկիր) ՄԱԿ-ում աննախադեպ համերաշխություն են դրսեւորում եւ աջակցում միմյանց, որոշ դեպքերում նույնիսկ ի վնաս սեփական շահերի (ամենացայտուն օրինակը գրանցվեց նախորդ տարի, երբ Ադրբեջանը Հայաստանի հետ միաժամանակ աջակցեց ազգերի ինքնորոշման սկզբունքն ամրագրող բանաձեւին միայն այն բանի համար, որ դա առաջարկել էր Պակիստանը): Իսլամական համերաշխության գործոնից տուժածների ցանկում Հայաստանն ամենեւին էլ միակը կամ առաջինը չէ: Նույն Իսրայելը ՄԱԿ ԳԱ-ում ունեցած դժվարությունների համար հենց ԻԿԿ-ին է «պարտական»: Բայց Իսրայելը դեռ ոչինչ (ռեսուրսների իմաստով), այդ խնդիրն արդեն հինգ տասնամյակ հաղթահարել չի կարողանում Հնդկաստանի նման գերտերությունը:

Բաքվի իշխանությունները, հասկանալով նշված օրինաչափությունների նրբությունները, որոշել են քաղաքական օգուտներ քաղել դրանից: Եվ դա նախաձեռնել են դեռ 2000-ականների սկզբին (հավանաբար զգալով, որ մասնագիտացված այնպիսի կառույցում, ինչպիսին ԵԱՀԿ-ն է՝ ի դեմս Մինսկի խմբի, իրենք որեւէ հաջողություն ունենալ չեն կարող): Արդյունքում՝ Ադրբեջանն այս տարի եւս մտադիր է հարցը քաք պահել եւ ԳԱ օրակարգ մտցնել «Ադրբեջանի գրավյալ տարածքներում մարդու իրավունքների ոլորտում միջազգային հումանիտար իրավունքի եւ միջազգային ստանդարտների նորմերի պահպանումը» վերնագրով բանաձեւի նախագիծ: Դրա տեքստը հայտնի չէ, բայց կասկածից վեր է, որ այս դեպքում եւս գործ ունենք Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ Ադրբեջանի միակողմանի մեկնաբանություններն ու քարոզչական կլիշեները բովանդակող տեքստի հետ:

Վերը ներկայացված փաստերն ու իրողությունները վկայո՞ւմ են արդյոք, որ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը վատ է աշխատել (կամ, օրինակ, վատ է աշխատել Իսրայելի արտգործնախարարությունը): Պատասխանը, բնականաբար, ոչ է: Որովհետեւ, որքան էլ անցանկալի լինեն այդ որոշումներն ու բանաձեւերը, Հայաստանը կամ այդ նույն Իսրայելը ՄԱԿ ԳԱ ձայների վրա ներազդելու բավարար ռեսուրս չունեն:

Մինչդեռ ՀՀ նախկին արտգործնախարար, 1992-1996 թթ. ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ալեքսանդր Արզումանյանն այլ կարծիքի է: «Ազատություն» ռադիոկայանին օգոստոսի 26-ին տված հարցազրույցում Ա. Արզումանյանը վիճակի պատասխանատու է հայտարարել Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը, որը, նրա կարծիքով, վերջին տարիներին զբաղվում է «ոչ թե արտաքին քաղաքականությամբ, այլ PR-ով զբաղվող կազմակերպությանը հարիր գործունեությամբ»:

Նույն հարցազրույցում, սակայն, նա նշել է, որ իրար հաջորդող բանաձեւերով Բաքուն ցանկանում է «Ադրբեջանի գրավյալ տարածքներ» արտահայտությունը դարձնել նորմ: Նշել է, որ բանաձեւի նախագծի չընդունումը բացառվում է ու դա բացատրել կանոնակարգով: Նաեւ հավելել է, որ նման փաստաթղթերը խեղաթյուրում են Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման պայքարը:

Ինչպես տեսնում ենք, Ա. Արզումանյանն իր կոշտ գնահատականի որեւէ հիմնավորում չի տվել: Իսկապես, նրա թվարկած գործոններից որեւէ մեկը (պաշտոնական Բաքվի ցանկությունները, ՄԱԿ կանոնադրությունն ու ընթացակարգերը) ՀՀ ԱԳՆ իրավասությունների տիրույթում չեն: Սա հաստատել է հենց նույն Ա. Արզումանյանը «Առավոտ» օրաթերթին (25.08.2010) տված հարցազրույցում. «Ընդունված պրակտիկայի համաձայն, երբ օրակարգ հարց են մտցնում, հետագայում եթե լուծում չի ստացել այն խնդիրը, որի վերաբերյալ բանաձեւ է առաջարկվել, գրեթե հնարավոր չէ օրակարգից հանել այդ հարցը: Ամենալավ՝ ցայտուն օրինակներն են արաբա-իսրայելական հակամարտության վերաբերյալ ընդունված բանաձեւերը. 1967 թվականից ՄԱԿ-ի օրակարգ են մտել բանաձեւեր, որոնք ամեն տարի, անխտիր այս վերջին 30-40 տարիների ընթացքում մտել են օրակարգ եւ գրեթե կոնսենսուսով ընդունվել, կամ ուժերի հարաբերակցությունն է նույնիսկ պարզ, թե քանի կողմ, քանի դեմ ձայներով կընդունվեն: Այնպես որ՝ այս բանաձեւը շարունակելու է ամեն տարի մտնել օրակարգ, քվեարկվել, ընդունվել, քանի դեռ չի արձանագրվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորում»:

Այսքանից հետո ամենեւին էլ հասկանալի չէ, թե իրավիճակը փայլուն պատկերացնելու պարագայում ինչի՞ հիման վրա է Ա. Արզումանյանը եզրակացրել, որ վիճակի պատասխանատուն հենց Հայաստանի արտգործնախարարությունն է: Գուցե՝ սեփական փորձի՞: Ի վերջո նա աշխատել է և՛ ՄԱԿ-ում, և՛ ԱԳՆ-ում ու փայլուն տիրապետում է նման իրավիճակների նրբություններին ու դրանք հաղթահարելու հնարավորություններին:

Եթե իսկապես նրա գնահատականների հիմքը սեփական փորձն է ու իր պաշտոնավարման ժամանակահատվածի հետ համեմատությունը, ապա այստեղ լուրջ հարց է առաջ գալիս. ի՞նչ մեթոդաբանությամբ է նա գնահատական տվել իր հաջորդներին:

Հակիրճ հիշեցնենք, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ը բազմաթիվ փաստաթղթեր է ընդունել, որոնց թվում հատկապես կարեւոր են Անվտանգության խորհրդի թվով 4 բանաձեւերը: Դրանք ընդունվել են հենց այն ժամանակ, երբ ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչն էր Ա. Արզումանյանը: Հիշեցնենք, որ ի տարբերություն ԳԱ ընդունած բանաձեւերի, ԱԽ բանաձեւերը ենթակա են պարտադիր կատարման ու պահելի ազդեցություն ունեն բանակցային գործընթացի վրա:

Այդ ի՞նչ հիմքով է Ա. Արզումանյանն իր (նախկին) կոլեգաներին մեղադրում, երբ իր պաշտոնավարման ընթացքում նման փաստ է արձանագրվել, այն էլ՝ մի քանի անգամ: ՄԱԿ ԱԽ 15 անդամներից 5-ը (ընդ որում՝ երեքը ԵԱՀԿ ՄԽ անդամ են) վետոյի իրավունք ունեն, եւ նրանցից յուրաքանչյուրի «դեմ» քվեարկությունը կարող էր կանխել հիշյալ բանաձեւերի ընդունումը: Ժամանակին Ա. Արզումանյանը չի կարողացել 1 առանձին՝ համեմատաբար աղեկվաս երկրի հետ անհրաժեշտ աշխատանք տանել, բայց բողոքում է, որ այսօր այդ աշխատանքը չի տարվում մոտ 200 երկրների հետ, որոնց մեծ մասը, կրոնական գործոնից բացի, խնդիրը որեւէ այլ պրիզմայով չի ընկալում:

Ի դեպ, ուշագրավ մի փաստ, որ պատմության դասագրքերում չեք հանդիպի: Ասում են՝ ՄԱԿ ԱԽ-ում բանաձեւի ընդունման համար՝ Ա. Արզումանյանի «արդյունավետ» գործունեության պատճառով, ժամանակի ուժայիններից մեկն ատպակել է ՄԱԿ-ում ՀՀ ներկայացուցչի անմիջական ղեկավարին: Բայց՝ չշեղվենք:

Պակաս տպավորիչ չեն Ա. Արզումանյանի «ձեռքբերումները» նաեւ ՄԱԿ ԳԱ ձեւաչափում: Լեռնային Ղարաբաղը ՄԱԿ ԳԱ փաստաթղթերում առաջին անգամ հիշատակվել է 1994 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Համագործակցություն Միավորված ազգերի եւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության միջեւ» բանաձեւում: Փաստաթուղթն անցել է կոնսենսուսով, այսինքն՝ Հայաստանը՝ ի դեմս Ա. Արզումանյանի, նույնպես «կողմ» է եղել: Մինչդեռ բանաձեւի 8-րդ կետի ձեւակերպումը՝ «Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղ շրջանը», Ադրբեջանի այն քարոզչական կլիշեներից մեկն է, որ պաշտոնական Բաքուն արդեն երկու տասնամյակ փորձում է ամրագրել ամենատարբեր փաստաթղթերում ու բանաձեւերում: Եվ ինչպես տեսնում ենք, դա նրան հաջողվել է հենց Ա. Արզումանյանի «ջանքերով»:

Այսքանից հետո էլ նախկին արտգործնախարարը պնդում է, թե ամենամտահոգիչը հակամարտության էությունը խեղաթյուրելու Ադրբեջանի ողջեգրած մոտեցումն է:

Այսքանը՝ Ա. Արզումանյանի «արդյունավետ» շրջանի մասին: Հիմա համեմատենք: Նրա պաշտոնաթողությանը հաջորդած շրջանում ՄԱԿ ԳԱ-ում իրավիճակն աստիճանաբար շտկվել է. եթե 1997թ. Ադրբեջանի շրջանառած բանաձեւն անցել է ձայների 104 «կողմ»-ով, ապա 1999թ. դրանց թիվը նվազել է մինչեւ 55-ի, իսկ 2008-ին, ինչպես արդեն նշեցինք, 39-ի:

Հնարավո՞ր էր նման արդյունք՝ առանց Հայաստանի դիվանագիտական ջանքերի: Պատասխան՝ ՈՉ: Այդ ժամանակահատվածում Հայաստանին հաջողվել է շահել ԻԿԿ անդամ մի շարք երկրների (Սիրիա, Լիբանան, Իրան, Թուրքմենստան, Ղազախստան եւ այլն) չեզոքությունը: Մի բան, որ նույնիսկ Հնդկաստանին է անհասանելի: Այդ ընթացքում Հայաստանին հաջողվել է գրեթե անհնարինը՝ ներազդել Չինաստանի մոտեցման վրա եւ այսպես շարունակ:

Արդյունքում՝ դինամիկան ակնհայտ է. հակամարտության մեջ չներգրավված երկրներն աստիճանաբար համալրում են «ձեռնպահ»-ների բանակը, իսկ միջնորդական առաքելություն իրականացնողները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Ֆրանսիան, ոչ միայն «դեմ» են քվեարկում, այլեւ ծանուցում են խնդրի միակողմանի ներկայացման եւ զգուշացնում բանակցային գործընթացի վրա դրա բացասական ազդեցության մասին:

Կրկնենք՝ այս արդյունքին, առանց Հայաստանի ԱԳՆ-ի անհրաժեշտ ջանքերի գործադրման, անհնար կլիներ հասնել: Հետեւաբար՝ ԱԳՆ-ին մեղադրելու Ա. Արզումանյանի հայտարարությունը միանշանակ անհիմն է: Ուստի հարց է առաջանում՝ ո՞րն է նման վերաբերմունքի դրդապատճառը:

Ենթադրվում է, որ նա, լինելով ընդդիմադիր գործիչ, կոշտ հայտարարություն արել է՝ ներքաղաքական դաշտում որոշակի դիվիդենտներ ստանալու համար: Բայց այդ դեպքում, լուրջ արդյունքի հասնելու համար, անհրաժեշտ էր գոնե թվարկել ԱԳՆ-ի որոշակի բացթողումներ, չիրականացված քայլեր, մատնանշել մի քանի կոնկրետ անելիք, ինչը կշիռ կհաղորդեր իր ասածներին: Այլապես՝ քամու տատանման տպավորություն է առաջանում:

Դրդապատճառների հետ կապված մյուս ենթադրությունը կարելի է միայն պատկերավոր ներկայացնել. որոշակի իրավիճակներում հանցանքի վայրում «բռնեք գողին» բացականչում է հենց ինքը՝ գողը: Գուցե հենց նմանատիպ իրավիճակի հետ գործ ունենք:

**ԱՎ. ՍԵՄԵՐՋՅԱՆ**

# Վերին Լարսի «վրացական-օսական» կիրառությունը

Վերեւներում ու այլ հարթություններում տարբեր մակարդակի հանդիպումներում հնչող հակառուսական, հակավրացական հայտարարությունների կողքին փոքրիկ առաջընթացներ եւս գրանցվում են մեր տարածաշրջանում բարդ փոխհարաբերություններ ունեցող երկու երկրների միջեւ իրավիճակի փոփոխության առումով:

«Ինտերֆաքսը» տեղեկացնում է, որ արդեն իսկ Թբիլիսիի կենտրոնական ավտոկայանից միկրոավտոբուսները մեկնում են Թբիլիսի-Վլադիկավկազ-Թբիլիսի երթուղով: 15 մարդու համար նախատեսված միկրոավտոբուսը Թբիլիսիից Վլադիկավկազ մեկնողներին հասցնում է Վերին Լարսի անցակետ, որտեղից մաքսակետն ու անձնագրային ստուգումն անցած ուղեւորները ճանապարհը շարունակում են արդեն ռուսական կողմում սպասող միկրոավտոբուսով: Ճանապարհածախսը մեկ ուղեւորի համար կազմում է մոտ 60 դոլար:

Ըստ աղբյուրի՝ այս նախաձեռնության հեղինակ է հանդես եկել հյուսիսօսական կողմի վարորդ բնակիչներից մեկը, ինչն էլ, ինչպես տեսնում ենք, պահանջարկ ունի նաեւ վրացական կողմում:

Ստացվում է, որ Վրաստանից էլ Ռուսաստան մեկնելու ցանկություն հայտնողներ են եղել, այսինքն՝ Վերին Լարսի անցակետը հարկավոր է նաեւ Վրաստանին, ընդ որում, այն իր տնտեսական եւ սոցիալական դերակատարությամբ կարող է դրական ազդեցություն ունենալ բավականին վատթար վիճակում գտնվող վրաց-ռուսական հարաբերությունների համար: Եվ սա այն դեպքում, երբ Վրաստանում եւ հատկապես վրացիները սիրում են կրկնել, թե Վերին Լարսը բացել են միմիայն Հայաստանի համար:

Ա. Հ.

# Իրանական թերթը Կառլա Բրունիին «պոռնիկ» է անվանել



Իրանի պահպանողական կառավարության տեսակետները պաշտպանող «Քեյհան» օրաթերթը Ֆրանսիայի առաջին տիկին Կառլա Բրունիին «պոռնիկ» է անվանել: Այդ մասին հաղորդում է «Դեյլի մեյլ» թերթը:

Օրերս իրանական թերթում հոդված էր հրապարակվել «Ֆրանսիական պոռնիկները միացան իրավապաշտպանների բողոքին» վերնագրով, որտեղ հիշատակվում են Կառլա Բրունին եւ նրա ընկերուհին՝ դերասանուհի Իզաբել Աջանին: Նյութը հրապարակվել էր այն բանից հետո, երբ երկու կանայք հանդես էին եկել երկու զավակների մայր, 43-ամյա Սաքինե Մոհամմադի Աշթիանիի պաշտպանությամբ:

Իրանցի ադրբեջանուհի Աշթիանին 2006-ին դատապարտվեց քարկոծությամբ մահապատժի: Նրան մեղադրում են ամուսնուն դավաճանած եւ սպանած լինելու մեջ: Կինը խոստովանել էր իր մեղքը, բայց հետո հայտարարել էր, թե խոստովանությունն արված է ճնշման ներքո: Աշթիանիի պաշտպանությամբ հանդես են եկել տարբեր իրավապաշտպանական կազմակերպություններ, մի շարք երկրներ դատապարտել են Իրանի իշխանությունների գործողությունները:

Մի քանի օր առաջ Կառլա Բրունին ստորագրեց հանրագրի տակ, ինչպես նաեւ գրեց բաց նամակ ի պաշտպանություն Աշթիանիի: Ի պատասխան՝ իրանական թերթը հրապարակեց հոդված, որտեղ թվարկվում են Ֆրանսիայի նախագահի կնոջ բազմաթիվ սիրավեպերը զանազան հայտնի անձանց հետ: Բացի դրանից, իրանական հեռուստատեսության եթերում հնչեց հայտարարության, որ Բրունին Աշթիանիին պաշտպանում է սեփական անբարոյականությունն արդարացնելու համար:

Ելիսեյան պալատը առայժմ որեւէ ձեւով չի մեկնաբանել իրանական թերթի վիրավորական հրապարակումը:

# Նախագահ Իլհամ Ալիեւի եւ նրա ընտանիքի անվտանգությունը վստահված է Մոսսադի աշխատակիցներին

*1-ին էջից*

Այդ մասին մեզ 2008-ի հուլիսի 4-ին տեղեկացրել է «Յաֆինդողուհաբեր» էլեկտրոնային թերթը: Ըստ թուրքական կայքէջի՝ վաշինգտոնյան ինստիտուտը օրինակելի համարելով իսլամական աշխարհի համար Իսրայել-Ադրբեջան հարաբերությունները, վերլուծականում տեղ է տվել նաեւ հետեւյալ սկանդալային փաստին. «Արտերկրյա այցելությունների ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի անվտանգությունն արտասահմանում ապահովում են իսրայելական գաղտնի ծառայությունների՝ Մոսսադի կադրային գործակալները»:

Ի դեպ, 2009-ի հունվարի 12-ին «Սթարի» հեղինակ Արդան Զենթուրքն էլ, առանց Մոսսադի անունը տալու, վկայել էր, որ իսրայելական անվտանգության ծառայությունները ապահովում են նույնիսկ երկրի նախագահի եւ ընտանիքի անդամների անվտանգությունը: Այլ կերպ, երկրի ներսում Իլհամ Ալիեւի անվտանգության ապահովումը նույնպես վստահված է Մոսսադին:

Համենայն դեպս, «Ենի Մուսաֆաթի» հեղինակ Զամին Հաջին, մեկնաբանելով վաշինգտոնյան ինստիտուտի վերլուծականում նախագահ Ալիեւի անվտանգության ապահովմանն առնչվող հարցը, ասել է. «Եթե ճիշտ է Մոսսադի առնչությամբ ինստիտուտի հրապարակումը, ապա դա Ադրբեջանին պատիվ չի բերի: Ավելին, դա հակասում է մեր անկախությանը եւ ազգային անվտանգության պահպանման տրամաբանությանը: Այդ փաստը իսկույն պետք է հերքվի կամ էլ ճշմարտության մասին իրազեկվի հասարակությունը: Եթե դա այդպես է, ապա սեփական անվտանգության ապահովման նկատառումով ո՞ր երկրի գաղտնի ծառայություններին պետք է դիմի շարքային ադրբեջանցի քաղաքացին: Իսրայելի հետ Ադրբեջանի հարաբերությունները, հակառակ վաշինգտոնյան ինստիտուտի պնդման, ամենեւին էլ օրինակելի չեն մահմեդական մյուս երկրների համար: Ադրբեջանն առ այսօր կատարել է երկրում առկա հրեական հզոր լոբբիի բազում պահանջները: Եթե Իսրայելում Ադրբեջանը դեսպանություն չի բացում, ապա դա արվում է «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության աչքին թոզ փչելու համար: Իսրայելի ախորժակը այնքան է բացվել, որ Ադրբեջանից գաղթած հրեաների համար մեր պետությունից թոշակ է պահանջում, այն էլ յուրաքանչյուրին 700-800 դոլար, թքած ունենալով 60-70 մանաթ թոշակ ստացող ծերունիների վրա: Իշխանությունը մի կողմ, ի՞նչ օգուտ է քաղել ադրբեջանական ժողովուրդը հրեական լոբբիներից: Մե՞զ են օգնել ղարաբաղյան հիմնահարցում»:

Այնուհետեւ Հաջին ուշադրություն է հրավիրել Բաքվում մասոնական խորհրդանիշների նկատվող աճի վրա, օրինակ բերելով նախկին «Ռեսպուբլիկա», ներկայումս Հեյդար Ալիեւի անվան պալատի զբոսայգում տեղակայված սյուները, որոնք հիշեցնում են մասոնությունը խորհրդանշող Սողոմոն Իմաստունի պալատի սյուները, կամ մետրոյի նախկին «Բաքվի սովետներ» կայարանի մուտքի մոտ կառուցված բուրգը: Ապա Հաջին ավելացրել է. «Հասկանալի է, որ այս բուրգը կառուցել է իսրայելական «Կադիշ Դեվիչ ինտերնեյշնլ» ընկերությունը»:

Թուրքական կայքէջը չի մեկնաբանում «Ենի Մուսաֆաթի» հեղինակ Զամին Հաջիի տեսակետները, պարզապես հետգրության կարգով ավելացնում է. «Հանուն արդարության պետք է նշել, որ մասոնական խորհրդանիշներից բուրգը տեղ է գտել նաեւ «Ենի Մուսաֆաթ» կուսակցության զինանշանում»:

Եթե որեւէ երկրում նախագահի անվտանգությունն անգամ ապահովվում են մեկ այլ պետության գաղտնի ծառայությունները, ապա, ըստ բանականության, այդ երկրի գոնե պետական գործիչները չպետք է ունենան Հայաստանի անկախությունը կասկածի տակ դնելու բարոյական իրավունքը: Սակայն Ադրբեջանում հայատյացությունը վերածել է ազգային բնազդի, իսկ բանականությունը՝ յուրահատուկ է մարդկանց: Ինչ վերաբերում է բարոյականությանը, ապա ադրբեջանցի հրոսակը դա դրսեւորել է հայ սպանելու համար մարդասպան սպահային ազգային հերոս հռչակելով:



# Իրաքում քամուն են տրվել միլիարդավոր դոլարներ

Իրաքի սոցիալական ոլորտի օբյեկտների վերակառուցման համար ԱՄՆ-ի նախատեսած միլիարդավոր դոլարները անտեղի վատնվել են: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը՝ վկայակոչելով բյուջեի ծախսերը վերահսկող ամերիկյան աուդիտորական գործակալության աղբյուրներ:

Մասնավորապես, «40 մլն դոլար է թաղվել Բաղդադի հյուսիսում կառուցված դատարկ բանտում, 165 մլն դոլար վատնվել է չգործող մանկական հիվանդանոցի վրա, 100 մլն՝ Ֆալլուջայի ջրազրկման համակարգի վրա, մինչդեռ կեղտաջրերը դարձյալ հոսում են փողոցներում»:

«Ամերիկացիները հեռանում են Իրաքից՝ այնտեղ թողնելով հարյուրավոր անավարտ եւ չիրագործված նախագծեր: Հարկատուների փողերից քամուն տրված է մոտ 5 մլրդ դոլար, որ կազմում է Իրաքում զանազան օբյեկտների վերակառուցման համար ԱՄՆ-ի ծախսած գումարի գրեթե 10 տոկոսը», գրում է գործակալության թղթակից Կիմ Գեյմը:

Աուդիտորների 300 հաշվետվությունների մեջ չեն մտնում անվտանգության ապահովման ծախսերը, որոնք կազմում են որոշ նախագծերի արժեքի մոտ 17 տոկոսը:

«Իհարկե, կառուցվել են հարյուրավոր ոստիկանական տեղամասեր, սահմանապահ ուղեկալներ, կառավարական հիմնարկներ, բարձրացել է Իրաքի անվտանգության ուժերի պրոֆեսիոնալիզմը: Բայց նույնիսկ ավարտված նախագծերում մեծ մասամբ չեն կատարվել առաջադրված խնդիրները», շարունակում է Կիմ Գեյմը:

Օգոստոսի լույս 19-ի գիշերը ամերիկյան վերջին մարտական բրիգադը հեռացավ Իրաքից: Բայց մոտ 50 հազար ամերիկացի զինծառայող առնվազն մեկ տարի կմնա Իրաքում: 2011-ի դեկտեմբերի 31-ից հետո Իրաքում պետք է մնան միայն ԱՄՆ դեսպանատունը եւ հյուպատոսարանները պաշտպանող ամերիկացի զինծառայողներ: Այսպիսով, Իրաքում յոթ տարի մնալուց եւ միլիարդներ վատնելուց հետո ամերիկացիները հեռանում են՝ այդպես էլ չհասնելով իրենց առաջադրած նպատակներին:

# ԱՄՆ-ը Ֆրանսիայից պահանջում է Լիբանանին չտալ HOT հրթիռներ

Լոնդոնում լույս տեսնող սաուդյան «Աշ Շարք ալ Աուսաթ» թերթը հաղորդում է, որ Ֆրանսիան Լիբանանին կարող է մատակարարել HOT հրթիռներ՝ «Գազել» ուղղաթիռների վրա տեղադրելու համար:

Թերթը հավելում է, որ ԱՄՆ Կոնգրեսի արտաքին գործերի հանձնաժողովի փոխնախագահ Իլեանա Ռոս-Լեխտինենը հանդես է եկել Ֆրանսիային ուղղված նախազգուշացմամբ, նշելով, որ Փարիզը «պարտավոր է ընդունել պատասխանատու որոշում» եւ չիրականացնել հիշյալ գործարքը, քանի դեռ Լիբանանի կառավարությունն իր շարքերից չի արտաքսել ծայրահեղական տարրերին եւ չի զինաթափել «Հզբոլլահ» խմբավորմանը:

Ներկայումս Լիբանանում ուժեղացել է ինչպես «Հզբոլլահի», այնպես էլ դրա համակիրներ Իրանի եւ Սիրիայի ազդեցությունը: Ուստի, Ռոս-Լեխտինենի կարծիքով, ֆրանսիական հրթիռները կարող են ուղղվել Իսրայելի դեմ: Ամերիկացի կոնգրեսականը հրթիռների վաճառքը համարում է լուրջ սպառնալիք տարածաշրջանի կայունությանը եւ անվտանգությանը:

Սակայն Փարիզից ստացված հաղորդումները վկայում են, որ Ֆրանսիան հարկ չի համարում սառեցնել Լիբանանին HOT հրթիռների վաճառքի գործարքը:

Ֆրանսիայի անանուն պաշտոնական ներկայացուցիչը սաուդյան թերթի թղթակցի հետ զրուցելիս ասել է, որ Լիբանանին հարկավոր է ուժեղ բանակ, եւ Ֆրանսիան խոստացել է Բեյրութին օգնել սպառազինման հարցում: Բացի դրանից, Փարիզում գտնում են, որ նման հրթիռների փոքր քանակի մատակարարումը չի փոխի ուժերի հարաբերակցությունը. իսրայելական բանակը առաջվա պես վճռական առավելություն կունենա լիբանանյանի նկատմամբ:

# BP-ն պարզել է նավթահարթակի պայթյունի պատճառը



Մեքսիկական ծոցում BP-ի նավթահարթակի պայթյունի կապակցությամբ ընկերությունում անցկացված ներքին քննությունը ցույց է տվել, որ ճարտարագետները սխալ են մեկնաբանել ճնշման տվյալները, որոնք վկայում էին պայթյունի անխուսափելիության մասին:

Բլումբերգ գործակալությունը հաղորդում է, որ նավթահորի կայունության վերաբերյալ սխալ հետեւություն անելով՝ BP-ի աշխատակիցները փորձել են հորատման լուծույթը փոխարինել ծովի ջրով: Լուծույթը գազից եւ նավթից ծանր է, մինչդեռ ավելի թեթեւ ծովաջուրը չի կարողացել կանխել գազի արտահոսքը: Գազը թափանցել է նավթահոր եւ բարձրացել վերեւ, որտեղ էլ պայթել է: Պայթյունի հետեւանքով հորատման աշտարակի վրա զոհվեց 11 մարդ, իսկ վնասված նավթահորից արտահոսեց ավելի քան 4 մլն բարել նավթ:

BP-ի ներքին քննության արդյունքները կազմում են 200 էջանոց փաստաթուղթ: Սպասվում է, որ այն կհրապարակվի 10 օրվա ընթացքում: Ընկերությունում Բլումբերգի հաղորդումը առայժմ չեն մեկնաբանել:

Մեքսիկական ծոցում BP-ի նավթահարթակը պայթեց ապրիլի 20-ին, իսկ երկու օր անց խորտակվեց: Նավթահորի վնասված երեք մասերը հերմետիկորեն փակելու մի քանի անհաջող փորձերից հետո BP-ն ի վերջո կարողացավ հատուկ գմբեթով դրանք փակել օգոստոսի սկզբներին:

Նավթի արտահոսքի հետեւանքով BP-ի կրած կորուստներն անցնում են 6 մլրդ դոլարից: Վթարի հետ կապված փոխհատուցումների վճարման նպատակով ընկերությունը ստեղծել է 20 մլրդ դոլարի հիմնադրամ:

# «Հայաստան» պատկերագիրքը

Յարդ լոյս չէ տեսած նման փառահեղ գիրք Հայաստանի մասին: Լուվրի թանգարանի գրադարանին մէջ ցուցադրուած այս պատկերագիրքը գործն է նշանաւոր լուսանկարչուհի Գրացիէլա Վիգոյի, հրատարակուած՝ Իտալական մեծագոյն հրատարակչատան (SKIRA) Սկիրայի մօտ, մեկենասութեամբ՝ Ժոզէֆ Ուղուրլեանի, որ ճիգ եւ նիւթական չէ խնայած գլուխ հանելու համար այս գեղեցկագոյն հատորը: Ահա թէ ինչպէս կ՚արտայայտուի ան գրքի մուտքին. «Շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի անխոնջ նվիրյալներ Պերճ եւ Վերա Սեդրակյաններին, ում շնորհիվ ես հայտնաբերեցի հիասքանչ երկիր Հայաստանը: Արմէն Սարգսյանին եւ իր ընտանիքին՝ այս գրքի հրատարակման համար մեծ աջակցություն ցուցաբերելու համար: Նրանք ինձ համար այս չբացահայտված ժողովրդի բարության եւ իմաստության մարմնացումն են:

Ծայրագույն պատրիարք եւ կաթողիկոս Ամենայն հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին՝ այս գրքի նախաբանում մեծահոգաբար մի քանի խոսք գրելու համար: Աշոտ Ղազարյանին՝ Հայաստանի յուրաքանչյուր եկեղեցի եւ անկյուն ինձ ցույց տալու համար: Սերգեյ Լալայանին եւ իր ընտանիքին՝ հյուրասիրության ավանդը Հայաստանում բարձր պահելու համար»:

Շնորհակալութեան այս խօսքերը թարգմանուած են չորս լեզուներու՝ անգլերէն, ֆրանսերէն, իտալերէն եւ ռուսերէն:

Գրքի յաջորդ էջին կը գտնենք մեկենասի հետեւեալ գիրը ուղղուած Կրացիէլլա Վիկոյին.

«Երբ ես խնդրեցի Գրացիելլային մեկնել Հայաստան, ապա ես ուզում էի կյանքի կոչել ինձ համար թանկ այդ երկրի ամենագեղեցիկ պատկերը: Իմ իղձն իրականացավ լավագույն կերպով: Արվեստագետին հաջողվեց վերարտադրել բնապատկերների իրական գեղեցկությունը, դրանց անաղարտությունը եւ նույնիսկ այդ ժողովրդի հոգին, որն այնքան է կապված իր հավատքին, որ բազմաթիվ անգամներ մազապուրծ է եղել ոչնչացումից այդ պատճառով:

Սակայն այս գիրքն ավելին է, քան երկրի պատկերը: Այն բացահայտում է այդ երկրի լեռների, եկեղեցիների, դեմքերի հավերժականությունը, մեզ հիշեցնելով, որ Հայաստանը քրիստոնեության օրրանն է եւ սկիզբը մեր քաղաքակրթության»:




Լուսանկարչուհի՝ Կրացիէլա Վիկօ

Գիրքը կը բացուի Սրբ. Մեսրոպ Մաշտոցի ադամանդակուռ ոսկեայ, 35 տառերով, անոնց կը յաջորդէ մեկենասին՝ Յոզէֆ Ուղուրլեանի շնորհակալութեան խօսքը: Յաջորդ զոյգ էջերու վրայ Զարենցի Կամարը, որմէ ետք դարձեալ զոյգ էջերու վրայ՝ Արարատը: Ապա զոյգ էջերու վրայ՝ սեւ ֆոնով՝ փոքր եւ մեծ մոմեր՝ վառուած: Կը դարձնենք էջը ու կը գտնենք Ամենայն հայոց կաթողիկոսի դիմանկարը եւ դիմացը իր օրհնութեան խօսքը 5 լեզուներով:

Յաջորդող էջերուն մէջ՝ Սրբ. Էջմիածնի տաճարը շրջապատուած ծառերով, ապա Տրդատի դուռը, որուն առջեւ շարքով կեցած են վանականները, դիմացը՝ Էջմիածնի մայր մուտքը: Յաջորդող երեք էջերու վրայ կը տեսնենք Կամարը իր զարդերով եւ հուսկ՝ տաճարին մէջ հաւատացեալները՝ խորանին դիմաց: Մնացեալ 227 էջերուն կը տեսնենք Միւռոնի աղաւնակերպ ամանը եւ խնկամանէն ետք ամբողջ Հայաստանն իր տեսարաններով, լեռներով, եկեղեցիներով, սրբավայրերով եւ ժողովուրդի ներկայացուցիչներով:

Այս գրութիւնը եւս թարգմանուած է 4 լեզուներու:

Գիրքին չափերն են 31x24 սանթիմ: 240 գունաւոր էջ: Թանկարժէք, սաթինէ թուղթ:

Գրքի գեղարուեստական ձեւաւորումը կատարած են հետեւեալ անձերը.

Գրաֆիկական յղացում՝ Մարիլլօ Էվա՝ Վանզիլլա, տպագրութեան պատասխանատու՝ Էմմանուէլ դի-Լալլօ, էջադրում՝ Սարա Սալվի,

Գունաւոր նկարները առնուած են այնպիսի անկիւններէ եւ այնպիսի վարպետութեամբ, որ կրնան միայն հիացում պատճառել ամենախիստ ճաշակ ունեցողին անգամ:

Գրքի վերջին 13 էջերը կը ներկայացնեն ներկայ, ապրող Հայաստանի Մատենադարանը, նուագարանները, լաւաշ հացն ու անոր պատրաստութիւնը, արեւնածաղիկն ու հողը, նուռը, ընկոյզը, լոյսերու մէջ լողացող Հանրապետութեան հրապարակը իր գեղեցիկ կառոյցներով:

Գիրքը կը գոցուի զոյգ էջերու վրայ բացուող արշալոյսով մը, որ կը հրդեհէ երկինքը:

Գիրքը կը գոցուի հետեւեալ խօսքերով.

«Սա Հայաստանի մասին տուրիստական ուղեցոյց չէ, այն չի բացատրում, թէ ինչ է ներկայացնում ամէն մի պատկերը եւ այն չի ասում ձեզ, թէ ինչ տեսնել: Այն մեծ էմոցիոնալ ուղղութիւն է, սիրոյ պատմութիւն, զգացմունքների եւ պատկերների, լռութեան եւ երկնքի հաւաքածոյ:

Այն ունի միայն մէկ խորհուրդ, գոնէ մէկ անգամ ձեր կեանքում պէտք է այցելէք Հայաստան, որպէսզի զգաք նրա հոգին, ձայնը եւ գոյները, այն ամէնն, ինչ դարձնում է այդ երկիրն եզակի եւ անմոռանալի»:

**ԳՐԱՑԻԷԼԼԱ ՎԻԳՕ**

Ծնած Միլան, Կրացիէլլա Վիկօ իր ուսումը ստացած է Ժնեւ, նախքան արհեստավարժ թղթակից դառնալը Ռիզոլի ընկերութեան: Շարունակելով իր մասնագիտութիւնը կ՚որոշէ դառնալ արհեստավարժ լուսանկարիչ, Նիւ Եորքի մէջ հետեւելով մեծ վարպետ Ռոպէր (Marrlethorpe) Մառլըթորպի դասընթացներուն: Կը սորվի Ռեմբրանդի լոյսերը եւ դիմանկարներու արուեստը:

Ան իրագործած է բազմաթիւ պատկերագիրքեր, նշանաւոր դէմքերու եւ հասարակ մարդոց դիմանկարներ, արուեստի գիրքեր, որոնք կը պատմեն թղթակցի նուրբ լեզուով, իրականութիւնը՝ Չինաստանի, Հնդկաստանի եւ այս հատորով՝ Հայաստանի մասին:

Դէմքեր, կիներ, տեսարաններ, առօրեայ կեանքէն: Խորհրդաւոր բան մը կայ, որ կը տպաւորէ իր արուեստին մէջ, կարեւոր բան մը մարդկային հոգիի խորութեան մասին:

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ*
*Փարիզ*

# «Re Aninania» Երեւանի միջազգային անիմացիոն կինոփառատոնը կմեկնարկի սեպտեմբերի 9-13-ը

**Մեկ տարի առաջ, առաջին անգամ անցկացվեց «Ռե Անիմանիա» երեւանյան միջազգային անիմացիոն կինոփառատոնը, նպատակ ունենալով աջակցել հայկական անիմացիայի երբեմնի համբավի վերականգնմանը:**

**Երեկ լրագրողների հետ հանդիպեցին փառատոնի հիմնադիր տնօրեն Վրեժ Քասունին եւ գեղարվեստական ղեկավար Լուսինե Քասարջյանը ու տեղեկացրին «Ռե Անիմանիա-2010» միջազգային փառատոնի ծրագրին եւ այս տարի դրանում ընդգրկված նորություններին: Ինչպես անցյալ տարի, այս փառատոնին հյուրընկալվելու են անիմացիայի աշխարհում 23 հեղինակավոր ներկայացուցիչներ, որոնց թվում են «Ռե Անիմացիա» միջ. փառատոնի խորհրդի նախագահ՝ Մաքու Հաուարդը, Ֆրենք Գլեդսթոունը (ԱՄՆ), Դեյվիդ Սփրոքսթոնը (Մեծ Բրիտանիա), Ժան Փոլ Քոմենը (Ֆրանսիա), Մոհամեդ Ղազալան (Եգիպտոս), Մարթա Մաչադոն (Բրազիլիա) եւ այլք:**

**Ըստ Վրեժ Քասունու, փառատոնին ներկայացվել է 400-ից ավելի ֆիլմերի հայտեր 35 երկրներից եւ դրանցից միջազգային ժյուրին, որը, ի դեպ, կազմված է եղել միայն արտերկրի մասնագետներից, ընտրել է 263 մրցութային ֆիլմեր: Փառատոնին առաջին անգամ կմասնակցեն Չեխիայից, Ճապոնիայից, Չինաստանից, Սինգապուրից, Թուրքիայից, Սիրիայից, Հունաստանից, Բուլղարիայից եւ Նիդեռլանդներից ներկայացուցիչներ անիմացիոն կարճամետրաժ ֆիլմերով: Փառատոնին ներկայացված մրցույթային ֆիլմերը կառանձնանան չորս հիմնական անվանակարգերում՝ լիամետրաժ, կարճամետրաժ, ավարտական (ուսանողական) եւ հեռուստատեսային: Բացի դրանցից, կլինի մեկ հատուկ մրցանակ՝ «Կարճամետրաժ ֆիլմի համար գրված լավագույն երաժշտության համար»: Իսկ ժյուրիի ընտրությամբ կլինեն նաեւ այլ մրցանակներ՝ «Լավագույն դեբյուտ», «Լավ քաղաքացի» անվանումներով:**

**Այս տարվա փառատոնի նորույթներից մեկն էլ բացօթյա ցուցադրություններն են, որոնք կկայանան ամեն երեկո 21.30-ին Կասկադում, որին մինչեւ 16 տարեկանների մուտքը արգելված է (իսկ ինչպե՞ս են հսկելու բացօթյա վայրում, խիստ տարակուսելի է-խմբ.): Իսկ երեխաների համար «Նաիրի» կինոթատրոնում առավոտյան եւ կեսօրին կցուցադրվեն մանկական անիմացիոն նոր ֆիլմեր, որոնց տոմսերի համար սահմանվել են նվազագույն գին, նշեցին կազմակերպիչները:**

**Փառատոնի օրերին կանցկացվեն նաեւ վարպետության դասընթացներ աշխարհի հայտնի անիմատորների կողմից, հատուկ հայ անիմացիայով զբաղվողների համար: Բացի այդ փառատոնի կազմակերպիչներն իրենց գործառույթներում ընդգրկել են եւս 15 ծրագրեր, որոնք աստիճանաբար իրականացնելու են: Իսկ լրագրողների ու կինոքննադատների համար մշակվել է հատուկ մի ծրագիր, որը հնարավորություն կտա հյուրերի հետ նախապես դիտել ֆիլմերը, դրանք քննարկել կեսգիշերային հանդիպումներին մասնակցել ու ներկա գտնվել փակ ելույթներին:**

**Երեւանյան անիմացիոն ֆիլմերի փառատոնի մասին արտահայտվելիս Մաքու Հաուարդն ասաց. «Հայաստանը տարածաշրջանում տեսնում եմ որպես անիմացիայի եւ մուլտիպլիկացիայի ասպարեզում մետաքսի ճամփա...»:**

**Փառատոնին ներկա կլինի եւ Կաննի կինոփառատոնին մրցանակի արժանացած Սերժ Ավետիքյանի «Պատմությունը՝ շուն է» անիմացիոն ֆիլմը: Սերժ Ավետիքյանը նույնպես ընդգրկվել է մրցութային ժյուրիի կազմում:**

**Ս. Ս.**

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության եւ ԵՊՀ-ի համագործակցությունը շարունակվում է

**Երեկ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության եւ Երեւանի պետական համալսարանի միջեւ ստորագրվեց համագործակցության պայմանագիր 2010-2011 թվականների համար: Դեռեւս 90-ական թվականներից հիմնադրամի շնորհիվ հրատարակվել են 110 հայագիտական հատորներ եւ հենց այդ հիմնարկության հայկական բաժանմունքի շնորհիվ է գործում նաեւ ԵՊՀ հյուրերի տունը: Ըստ կնքված պաշտոնական պայմանագրի՝ մեկ տարում ընդլայնվելու է գրահրատարակչական գործունեությունը (լույս կընծայվի եւս 12 անուն հայագիտական գիրք՝ 4500 տպաքանակով), ֆինանսավորվելու են ԵՊՀ երիտասարդ գիտնականների արտերկիր գիտական եւ կրթական ուղեւորությունների ծրագիրը, ինչպես նաեւ օսմանագիտության զարգացման նպատակով տարվող աշխատանքները:**

**Պայմանագրի կնքման ընթացքում «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանը, որ ԵՊՀ շրջանավարտ լինելուց զատ նաեւ մայր բուհի պատվավոր դոկտոր է, շնորհավորել է ներկա դեկաններին ու համալսարանի աշխատակիցներին՝ նոր ուսումնական տարվա կապակցությամբ ու խոսել համալսարանի հետ 56 տարվա ջերմ ու բարեկամական համագործակցության նշանակության մասին, ու ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանին, Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանին եւ Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Անելկա Գրիգորյանին է հանձնել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության 50-ամյակի հուշամեդալները՝ պատմամշակութային, ազգանվեր գործունեության համար:**

**Ս. ՄԱԿԱՅԱՆ**

# Լեւոն Լաճիկյանի անհատական ցուցահանդեսը Գորիսում

**2006-ին Երեւանում լույս տեսած գեղագետ ու մշակութային մեկնաբան Լեւոն Լաճիկյանի «Խաչվող ճանապարհներ» գիրքը գրավեց ընթերցողի ուշադրությունը եւ արժանացավ ջերմ ընդունելության ոչ միայն շնորհիվ այնտեղ պարունակվող հետաքրքրական ուղեգրությունների, այլեւ հեղինակի տաղանդավոր գծանկարների: Ոգեւորված նման հաջողությամբ՝ Լեւոնը որոշեց շարունակել այդ աշխատանքը՝ երեւան բերելով իր Գյումրվա եւ Գորիսյան շարքերը: Դրանք ներառում էին հիշյալ քաղաքների ոչ միայն նշանավոր կառույցների ու կոթողների, այլեւ սովորական բնակելի տների գրաֆիկական պատկերումները: Հենց այդ շարքերն էին կազմում Գորիսում օգոստոսի 25-ին բացված արվեստագետի առաջին անհատական ցուցահանդեսի հիմնական առանցքը:**



**Քաղաքային պատկերասրահում հավաքված բազմաթիվ արվեստասերներն ու տեղական լրատվամիջոցները բարձր գնահատեցին Լեւոն Լաճիկյանի նկարչական տաղանդն ու սուր դիտողականությունը եւ հասկապես անթաքույց սերն առ իրենց բնակավայրը: Ինչպես իր բացման խոսքում նշեց Հայաստանի Նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ, գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը «Ֆրանսիայի Վիեն եւ Գորիս քույր քաղաքների մշակութային համագործակցության շրջանակներում բացված արդեն թվով 16-րդ ցուցահանդեսն է սա, որի հովանավորը Վիենի Հայ մշակույթի տունն է»: Նա մասնավորապես բարձր գնահատեց Լեւոն Լաճիկյանի ներկայացրած շուրջ 2 տասնյակ աշխատանքների գեղագիտական արժեքն ու ճանաչողական մեծ նշանակությունը: Ի նշան գնահատանքի՝ Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը նկարչին պարգեւատրեց Շնորհակալագրով եւ Գորիսին նվիրված գիրք-ալբոմով:**

**Իր խոսքում Լեւոն Լաճիկյանը հատուկ ընդգծեց այս իրադարձության կարեւորությունն իր ստեղծագործական կյանքում, ապա ավելացրեց. «Շենքերն ինձ համար լոկ քարե անշունչ, թեկուզ գեղեցիկ կացարաններ չեն: Դրանք ավելի շատ հոգու ամրոցներ են, բնավորություն կազմավորող եւ միջավայր կերտող երեւույթներ: Իմ նկարներում միայն առաջին հայացքից է բացակայում մարդը: Չէ՞ որ ներկա են նրա արարող միտքի ու ձեռքի դրոշմը կրող ստեղծագործությունները, ուրեմն նաեւ ինքը՝ ստեղծողը: Ես փորձում եմ պատկերել, օրինակ, Գյումրու այն միջավայրը, որը ծնունդ է տվել Իսահակյանին ու Շիրազին կամ ներկայացնել Բակունցի հայրենի Գորիսը»: Արվեստագետը վերջում շնորհակալություն հայտնեց Գորիսի քաղաքապետարանին եւ խիստ կարեւորեց ՀՆՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ Ժիրայր Մարտիրոսյանի ջանքերը գեղարվեստական բազմաթիվ ցուցահանդեսների կազմակերպման հարցում:**

ՀԱՍՄԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Խմբ. կողմից- Լեւոն Լաճիկյանի անհատական հաջորդ, առավել ամբողջական ցուցահանդեսը կկայանա Երեւանում՝ «Նարեկացի» արվեստի կենտրոնում, սեպտեմբերի վերջին:**

# «Հրազդան» մարզադաշտը ծառայեց իր «նպատակին»

Վերջապես «Հրազդան» մարզադաշտը ծառայեց իր «նպատակին»: Բայց պետք չէ ոգեւորվել եւ դրվատանքի խոսքեր ասել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանի (Նեմեց Ռուբո) հասցեին, քանզի այդ մարզաձեւը Հայաստանում անհուսորեն տապալված է: Օրերս «Հրազդանում», լավ մշակված խոտածածկին եւ տրիբունաներում մի քանի տասնյակ հազար «բարձրաճաշակ» մայրաքաղաքացիները հիացմունքով լսեցին ռաբիս երգիչ, բայց ՀՀ վաստակավոր արտիստ Թաթա Սիմոնյանի համերգը:

Զինծառայությունից վերադարձածները հիշեցին իրենց բանակի քեֆը, ամուսնացածները՝ իրենց հարսանիքը, իսկ արվեստից մի բան հասկացողները՝ այն բարի ժամանակները, երբ մեր երիտասարդությունը որոշակի ճաշակ ուներ եւ ծափահարում էր պրոֆեսիոնալ երգիչներին:

ՍԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

# Մարտական ոչ-ոքի, որ պահպանեց առաջնության ինտրիգը

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 19-րդ տուրում կայացավ չեմպիոնի կոչման հավակնորդներ «Բանանցի» եւ «Փյունիկի» սկզբունքային հանդիպումը, որում բավական հետաքրքրական ու դրամատիկ մրցավեճ ծավալվեց: Առաջին խաղակեսում «Բանանցը» մի փոքր հետ քաշված էր խաղում՝ հնարավորություն ընձեռելով փյունիկցիներին մեծ ուժերով գրոհելու: Սակայն «Բանանցի» գրոհները ավելի սուր ու վտանգավոր էին: Երկու թիմերն էլ վտանգավոր մի քանի պահեր ստեղծեցին, սակայն չիրացրին գոլային պահերը: Թվում էր, թե թիմերը հանգստի կգնան առանց դարպասը գրավելու: Սակայն առաջին խաղակեսի ավելացված ժամանակում «Փյունիկը» 2 անգամ հասավ հաջողության: Նախ պարզապես ֆանտաստիկ գոլի հեղինակ դարձավ Կառլեն Մկրտչյանը՝ գրեթե դաշտի կենտրոնից հուժկու հարվածով անակնկալի բերելով մրցակցի դարպասապահ Ստեփան Ղազարյանին: Մեկ րոպե անց Էդգար Մանուչարյանի տուգանային հարվածից հետո գնդակը դիպչելով մրցակցի գլխին, փոխեց ուղղությունն ու հայտնվեց դարպասում:

Այսպես անսպասելիորեն «Բանանցը» հայտնվեց ծանր իրավիճակում: Ի պատիվ «Բանանցի» ֆուտբոլիստների, 2-րդ խաղակեսում նրանք տիրեցին նախաձեռնությանն ու մեծ ճնշում գործադրելով «Փյունիկի» դարպասին, կարողացան խուսափել պարտությունից՝ խաղն ավարտելով իրենց ձեռնտու ոչ-ոքի (2-2) արդյունքով: Գոլերի հեղինակներ դարձան բրազիլացի Բետոն եւ նիգերիացի Դենիրան Օրտեգան: «Բանանցը» կարող էր նաեւ հաղթել, սակայն Հովհաննես Համբարձումյանի հեռահար հարվածը ցնցեց հորիզոնական ձողը: Փյունիկցի Էդգար Մանուչարյանն էլ վրիպեց նպաստավոր դիրքից:

Այսպիսով, գրանցվեց մարտական ոչ-ոքի, որը պահպանեց չեմպիոնի տիտղոսի համար առաջնությունում ստեղծված ինտրիգը:

Մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Ստեւիցա Կուզմանովսկի («Բանանց»)** - Իմ կարծիքով սա առաջնության լավագույն հանդիպումն էր: Բավական հետաքրքրական ու համառ մրցավեճ ստացվեց, որում ականատես եղանք գեղեցիկ կոմբինացիաների ու գոլերի: Ցանկալի կլիներ, որ նման հանդիպումները ավելի հաճախ լինեին, ինչը կնպաստի հայկական ֆուտբոլի զարգացմանը: Լավ


ՖՈՏՈԼՈՒՐ

խաղի համար շնորհավորում եմ երկու թիմերի ֆուտբոլիստներին, որոնք ուրախացրին ֆուտբոլասերներին:

Առաջին խաղակեսում հավասար պայքար ընթացավ, սակայն վերջում կենտրոնացումը թուլացրինք ու երկու գոլ բաց թողեցինք, ինչը ծանրացրեց մեր վիճակը: Կառլեն Մկրտչյանի գոլն իրոք շատ գեղեցիկ ու անսպասելի էր: Ի պատիվ տղաներիս, 2-րդ խաղակեսում կարողացան հաղթանակի հասնելու կամք ու վճռականություն դրսեւորել, չհուսահատվեցին ու փրկեցին խաղը: Այս խաղում կարող էինք նաեւ հաղթել, բայց եւ պարտվել: Ընդմիջումից հետո «Բանանցն» էր վերահսկում իրավիճակը, շատ գրագետ ու հստակ էին գործում բոլոր օղակները, ինչի շնորհիվ էլ հավասարեցրին հաշիվը:

Մեզ համար շատ կարեւոր էր բրազիլացի Ժոզե Կառլոսի ընդգրկումը թիմում: Նա ընդամենը 3 մարզում էր անցկացրել «Բանանցում», սակայն այսօր արդեն դրսեւորեց իր բարձր կարգը: Առջեւում 2 շաբաթ ընդմիջում է եւ այն կօգտագործենք, որպեսզի բրազիլացի ֆուտբոլիստը մերվի կոլեկտիվին եւ իրոք դառնա թիմի հաղթաթղթերից մեկը: Եվրո-2012-ի մեկնարկի առթիվ շնորհավորում եմ ՀՀ հավաքականին ու հաջողություն մաղթում: Առջեւում դեռ 9 տուր կա եւ վաղ է խոսել չեմպիոնի տիտղոսի մասին: Յուրաքանչյուր խաղ մեզ համար վճռորոշ է լինելու, այդ թվում «Փյունիկի» հետ 4-րդ շրջանի հանդիպումը:

**Վարդան Մինասյան («Փյունիկ»)** - Խաղից առաջ կազմի հետ կապված դժվարություններ ունեինք: Էդգար Մալաքյանը որակազրկված էր, իսկ Գեւորգ Ղազարյանը մարզման ժամանակ վնասվածք էր ստացել: Դա անդրադարձավ խաղի վրա, քանի որ 2-րդ խաղակեսում թիմի գործողություններում թարմություն մտցնելու նպատակով չկարողացա փոխարինումներ կատարել՝ պահեստայինների նստարանին չունենալով համապատասխան ֆուտբոլիստներ, որոնք ունակ լինեին բեկում մտցնել մրցակցությունում:

Երկու տարբեր խաղակեսեր ստացվեցին: Առաջինում լավ խաղացինք, 2 գոլ խփեցինք, իսկ ահա ընդմիջումից հետո փյունիկցիների մեծամասնությունը կանգնած էին: Վարազդաս Հարոյանը թեեւ 4 խաղ լավ մակարդակով էր անցկացրել, սակայն դեռեւս անփորձ է, ուստի նրա մոտ անվստահություն զգացվեց, որի պատճառով էլ փոխարինեցինք:

Ես աղյուսակին ընդհանրապես չեմ նայում ու չգիտեմ, թե քանի միավորով ենք հետ մնում «Բանանցից»: Ինձ համար այս պահին ավելի մտահոգիչ է ազգային հավաքականի ֆուտբոլիստների վիճակը: Հենց նոր տեղեկացա, որ Աղվան Մկրտչյանը վնասվածք է ստացել: Պետք է ամեն ինչ անել, որպեսզի հավաքականը մարտական կազմով ներկայանա ընտրական մրցաշարի մեկնարկային հանդիպմանը:

19-րդ տուրն առատ էր ոչ-ոքիներով: «Ուլիսն» Աբովյանում չկարողացավ հաղթել «Կիլիկիային»: Դարպասները մնացին անառիկ: Վերջապես միավոր վաստակեց «Շիրակը», որը Դիլիջանում 0-2 հաշվով պարտվելով «Իմպուլսին», կարողացավ 10 հոգով խուսափել պարտությունից: «Իմպուլսից» գոլերի հեղինակներ դարձան Էլտոն Կարդոսոն եւ Տիգրան Ոսկանյանը: «Շիրակից» աչքի ընկան Մկրտիչ Նալբանդյանն ու Անդրանիկ Բարիկյանը (11 մ):

Միակ հաղթանակը տոնեց «Միկան»: Ինչպես նախորդ տուրում, այս անգամ էլ «Գանձասարի» նկատմամբ թիմի հաղթանակն ապահովեց բրազիլացի Էդնեյի իրացրած 11 մ հարվածը:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բանանց | 19 | 14 | 3 | 2 | 44-17 | 45 |
| 2. Փյունիկ | 19 | 12 | 4 | 3 | 48-18 | 40 |
| 3. Ուլիս | 19 | 12 | 3 | 4 | 30-14 | 39 |
| 4. Միկա | 19 | 9 | 4 | 6 | 28-18 | 31 |
| 5. Իմպուլս | 19 | 6 | 5 | 8 | 17-32 | 23 |
| 6. Գանձասար | 19 | 6 | 1 | 12 | 15-27 | 19 |
| 7. Կիլիկիա | 19 | 4 | 3 | 12 | 17-37 | 15 |
| 8. Շիրակ | 19 | 1 | 1 | 17 | 12-48 | 4 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Էդուարդո դոս Սանթոս | «Բանանց» | 11 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 11 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 9 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 7 |
| Էդնեյ | «Միկա» | 7 |

# Մխիթարյանը հնգամյա պայմանագիր կնքեց «Շախտյորի» հետ

Օրեր առաջ վկայակոչելով ուկրաինական լրատվամիջոցներին, տեղեկացրել էինք Հենրիխ Մխիթարյանի «Շախտյոր» տեղափոխության մասին: Եվ ահա երեկ Դոնեցկի «Շախտյորի» պաշտոնական կայքը տեղեկացրեց, որ Հայաստանի հավաքականի 21-ամյա հարձակվողը պաշտոնապես տեղափոխվել է ուկրաինական այդ ակումբ: Հենրիխը 5-ամյա պայմանագիր է կնքել «Շախտյորի» հետ: Մխիթարյանի տրանսֆերը կազմել է 7,5 մլն դոլար: Նշենք, որ սա հայաստանցի ֆուտբոլիստների համար երբեւէ վճարած ամենաբարձր տրանսֆերային գումարն է:

Երեկ Հենրիխ Մխիթարյանը Դոնեցկի «Մետալուրգի» կազմում վերջին հանդիպումն անցկացրեց: Նախորդ 36 խաղերում նա 12 գոլի հեղինակ է դարձել: Իսկ այսօր նա կժամանի Երեւան եւ կմիանա ազգային հավաքականի իր խաղընկերներին, որոնք սկսել են նախապատրաստությունն ընտրական մրցաշարին:

Ինչ խոսք, «Շախտյոր» տեղափոխվելը Մխիթարյանի առջեւ մեծ հեռանկարներ կբացի: Նա թիմի կազմում հնարավորություն կունենա մասնակցելու չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի հանդիպումներին: Նշենք, որ Մխիթարյանով հե-




տաքրքրվում էր նաեւ գերմանական «Վերդերը»:

Մխիթարյանի տեղափոխությունը «Շախտյոր» ողջունել է ՀՀ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, որն armsport.am-ին հետեւյալն է ասել. «Արդեն հասունացել էր այլ ակումբ տեղափոխվելու պահը: Միայն ավելի ուժեղ ակումբում հանդես գալով Հենրիխը կարող է առաջադիմել: Այս առումով նա ճիշտ ժամանակին հեռացավ «Մետալուրգից»: Կարեւորն այն է, որ Մխիթարյանը շարունակում է իր վրա աշխատել ու չի բավարարվում ձեռք բերածով»:

# Անդրեասյանն առաջատարներից մեկն է

Հունաստանում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում հաջող է հանդես գալիս Զավեն Անդրեասյանը: Ըստ մրցումների պաշտոնական կայքի, Անդրեասյանը 6 տուրից հետո 5 միավորով թուրք Սուաթ Աթալիկի հետ գլխավորում է աղյուսակը: 3-րդ տուրում Եկատերինա Աթալիկի հետ հաշտություն կնքելուց հետո Զավենը հաղթեց Ալեքսանդր Ռայխմանին ու Անտոնիոս Պավլիդիսին: 6-րդ տուրում հայ շախմատիստի մրցակիցը Սուաթ Աթալիկն էր: Պարտիան ավարտվեց ոչ-ոքի: 7-րդ տուրում Անդրեասյանը կխաղա հույն Իոաննիս Նիկոլաիդիսի հետ:

Վահե Բաղդասարյանը 3,5 միավորով 21-րդ տեղում է: Նա 3-րդ տուրում հաշտություն կնքեց Անգելոս Սուրգկունիսի հետ, ապա հաղթեց Գեորգիոս Կաֆետսիսին: 5-րդ տուրում Վահեն 2-րդ պարտությունը կրեց՝ զիջելով բուլղարացի Ջուլիան Ռադուլսկուն, ապա հետեւեց հաղթանակը Նիկոլայոս Մոշուտասի նկատմամբ:

3 միավորով 27-րդ հորիզոնականում է Աղասի Ինանցը: Նա հաղթել է Գեորգիոս Սիդերիսին, ապա հաշտություն է կնքել Դիմիտրիոս Պապակոնստանտինոսի եւ Ալեխանդրո Գուլիարոսի հետ ու պարտվել է Ստամատիս Արգիրուդիսին:

# Ֆրանսահայ հանդբոլիստների համար մեծ պատիվ է Հայաստանը ներկայացնելը

Ինչպես տեղեկացրել ենք, սեպտեմբերի 2-4-ը Վանաձորում կանցկացվի հանդբոլի միջազգային մրցաշար, որում կխաղարկվի ՀՀ վարչապետի գավաթը: Մրցաշարին կմասնակցեն Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի եւ Իրանի հավաքականները:

Երեկ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության դահլիճում լրագրողների հետ հանդիպեցին հանդբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ **Սարգիս Գրիգորյանը**, ՀՀ հավաքականի մարզիչներն ու ֆրանսահայ հանդբոլիստները: Սարգիս Գրիգորյանը տեղեկացրեց, որ 2-րդ անգամ անցկացվող մրցաշարի նպատակը մարզաձեւը Հայաստանում մասսայականացնելն է, մարզասերներին բարձրակարգ խաղ հրամցնելը: Սպասվում է, որ Հայաստան կժամանեն հանդբոլի միջազգային ֆեդերացիայի նախագահ Հասան Մուստաֆան, եվրոպական ֆեդերացիայի ներկայացուցիչները:

Սարգիս Գրիգորյանը նշեց, որ մրցակիցները բավական ուժեղ են, ուստի լավ հանդես գալու նպատակով Հայաստանի հավաքականում ընդգրկվել են ֆրանսահայ 9 հանդբոլիստներ: Այդ հարցում ֆեդերացիային օգնել է «Օգնություն Հայաստանին» կազմակերպությունը, որի հետ 5 տարով պայմանագիր է կնքվել: Կազմակերպության ղեկավարն է **Պատրիկ Օթամյանը**: Մեծ ծավալի աշխատանք է տարվել ֆրանսահայերին ընտրելու, նրանց ակումբներից թույլտվություն ստանալու համար: Ըստ մրցակարգի, ազգային հավաքականում կարող են խաղալ նրանք, ովքեր վերջին 3 տարիներին ոչ մի երկրի հավաքականում հանդես չեն եկել: Ֆեդերացիայի նախագահը տեղեկացրեց, որ մրցաշարի կազմակերպ-



ՖՈՏՈԼՈՒՐ

ման բոլոր ծախսերը հոգացել են իրենց հովանավորների՝ «Գառնի ջուր» ընկերության, Սյունիքի մսամթերքների ֆաբրիկայի եւ «Հայռուսգազարդի» շնորհիվ:

Այնուհետեւ խոսքը տրվեց հյուրերին: Թիմի ավագ **Ալեքս Կումրյանը** նշեց, որ ուրախ են հրավերի համար, մեծ պատիվ է Հայաստանի հավաքականում խաղալը: Ըստ նրա, բոլոր տղաներն էլ հաղթելու վճռականությամբ են խաղահրապարակ դուրս գալու:

Պատրիկ Օթամյանը հետեւյալը նշեց. «Մեզ համար մեծ հրադարձություն է հայրենիք ժամանելը եւ հավաքականում խաղալը: Մեկ ամիս Ֆրանսիայում նախապատրաստվում էինք, մարզվում բարձր տրամադրությամբ: Երեկվանից Երեւանում սկսել ենք մարզումները: Արդեն այսօրվա պարապմունքում զգացվում էր, որ հավաքականի անդամները հասկանում են միմյանց, սերտ համագործակցություն է ստեղծվում խաղահրապարակում: Մենք չենք եկել որեւէ մեկին դաս տալու, այլ համատեղ ներկայացնելու Հայաստանն ու հաղթելու»:

Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ **Էդուարդ Օհանյանն** էլ հավաստիացրեց, որ կօգտագործեն ընձեռված բոլոր հնարավորությունները հաջող հանդես գալու համար: Մարզումների արդյունքում կընտրվեն այն 16 լավագույնները, որոնք էլ կներկայացնեն Հայաստանը միջազգային մրցաշարում:

Եվ այսպես, սեպտեմբերի 2-ին ժամը 15-ին Վանաձորի մարզահրահում կսկսվի մրցաշարի բացման հանդիսավոր արարողությունը, որից հետո մրցապարեզը կտրամադրվի Վրաստանի եւ Իրանի հավաքականներին: Ժամը 18-ին կսկսվի Հայաստան-Բելառուս հանդիպումը: Հաջորդ օրը մեր հանդբոլիստները կմրցեն իրանցիների հետ, իսկ սեպտեմբերի 4-ին կհանդիպեն Վրաստանի հավաքականի հետ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ադրբեջանին ինչ-որ բան են խոստացել, որ մտահոգությունը «պակասել է»

Ադրբեջանում վերջերս հայկական հարցի ուսումնասիրության գիտական կենտրոն էին բացում, որ իբր գիտականորեն «բացահայտեն հայկական ստերը», սակայն թերեւս հարեւանների մեջ ոչ միայն հայերենի իմացության, այլեւ ռուսերենի առնչությամբ են խնդիրներ առաջացել, քանի որ հերթական անգամ Բաքվից հնչող մեկնաբանություններն ուղղակի վկայում են, որ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունում էլ փաստաթղթեր կարդալու առանձնակի պատրաստակամություն չունեն:

Դրա փոխարեն, առանց փաստաթղթերին տեղեկանալու կամ դրանց բովանդակությունը չընդունելու մոտեցումը ներկայացվում է որպես ցանկալի իրողության դրսեւորում, իբր չկա այն, ինչ չեն ցանկանում կարդալ կամ հասկանալ: Խոսքը Ադրբեջանի ԱԳ նախարարության հերթական հայտարարության մասին է, որում փոխարտգործնախարար Արազ Ազիմովը ավելի շուտ իր անտեղյակությունն ու «կուրությունն» է ցուցադրում, քան պրոպագանդիստական նպատակներից ելնելով աղավաղում հանրամատչելի հայ-ռուսական N5 արձանագրության բովանդակությունը, որ վերաբերում է Գյումրու ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետի երկարաձգմանը:

Քանի կար, Ադրբեջանը գրեթե խուճապի մեջ էր ընկել նույն արձանագրության կապակցությամբ, երեկ արդեն, սակայն, պարզվում է, տրամադրությունները փոխվել են Ադրբեջանում, ու թերեւս դրանում ավելի շուտ «մեղավոր» է Դմիտրի Մեդվեդեւի առաջիկա այցը Բաքու: Թերեւս ինչ-որ բան հստակեցրել կամ պարզաբանել կամ ուղղակի խոստացել են Մոսկվայից, քանի որ փոխվել է Ռուսաստանին գրեթե մեղադրող ադրբեջանական չինովնիկերի բառապաշարի զգալի մասը:

Ազիմովը, մասնավորապես, քաղաքական մեծենայություն է որակել այն մեկնաբանությունը, թե ռազմական գործողություններ մեր տարածաշրջանում սկսվելու պարագայում Ռուսաստանը կաջակցի Հայաստանին: Ազիմովը այսօրինակ մեկնաբանությունները «քաղաքական անպատասխանատվություն» է որակել, այդ անպատասխանատվությունը հասցեագրելով Հայաստանին, մինչդեռ Ռուսաստանի կողմից նման պահվածքի կանխատեսումներ շատ ավելի ինտենսիվորեն արվում էին ադրբեջանական մամուլում հայտնվող քաղաքագիտական «դատողություններում», որոնց զգալի մասն էլ ոչ այլ ինչ է, քան պետական տեսակետի ներկայացում:

Այս նույն համատեքստում քանի դեռ Ադրբեջանում պատգամավորներն ու անգամ ռազմական «էլիտայի» ներկայացուցիչները, որոնց քաղաքագետներ էլ վրադիր, հայտարարում են, թե Ադրբեջանը պետք է «համարժեք» քայլ անի հայ-ռուսական արձանագրությամբ ստեղծված վիճակը հակակշռելու համար՝ թեկուզ որեւէ այլ երկրի կամ կազմակերպության ռազմաբազա տեղակայելով իր տարածքում, Ազիմը երեկ «Թրենդ» գործակալությանը տված հարցազրույցում շատ ավելի հանգիստ տոնով է փորձել ներկայացնել նույն հարցը: Ադրբեջանի փոխարտգործնախարարը հայտարարել է, թե Ադրբեջանը դեռեւս հետաձգում է իր տարածքում թուրքական ռազմակայանների տեղակայման հնարավորությունը: «Այդ որոշումը կախված է Բաքվի եւ Անկարայի ցանկությունից», մեկնաբանել է Ազիմովը՝ մոռանալով, որ քաղաքականության մեջ «ցանկություն» ասվածը որեւէ կերպ գործոն չի կարող լինել:

Ինչեւէ, Մեդվեդեւի այցելությունը, այն էլ պաշտոնական, տեղի կունենա սեպտեմբերի 2-3-ը, ու թերեւս որոշ հարցեր հստակություն ստանան, եթե, իհարկե, արդեն իսկ ի հայտ եկող ադրբեջանական սպասումները եւ շրջանառության մեջ կլինեն այդ այցելության ընթացքում: Ամեն դեպքում, ինչ էլ ներկայացնելու լինեն ադրբեջանական չինովնիկները, հստակ է, որ այդ երկիրը Ռուսաստանի հետ չպարզած խնդիրներ ունի, որոնք, ի դեպ, առնչվում են ոչ միայն ռուսական ռազմակայանի առնչությամբ արձանագրությանն ու դրա հնարավոր հետեւանքներին, այլեւ, առնվազն, Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան նախագահական մակարդակով վերջին հանդիպումից Ալիեւ կրտսերի «փախուստի» հանգամանքներին: Հաստատապես այս համատեքստից դուրս չէ, որ պետք է դիտարկել նաեւ Ադրբեջանում տեղակայված Գաբալայի ռադիոլոկացիոն կայանն ու C-300-ի այդպես էլ չհստակեցված «ճակատագիրը»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մեդվեդեւը գնում է Ադրբեջան

*1-ին էջից*

**Հարցին, թե «ինչ պոտենցիալ սպառնալիքներ է տեսնում Ռուսաստանը Հայաստանի համար տարածաշրջանում եւ ումից է պատրաստվում պաշտպանել», ՌԴ արտգործնախարարը պարզաբանել է, թե հիշատակված արձանագրությամբ միայն երկարաձգվել է բազայի տեղակայման ժամկետը: «Դրանով փոփոխություն չի մտցվում ոչ ռազմաբազայի գործառույթներում, ոչ այնտեղ ծառայողների թվում, ոչ էլ սպառազինության թվաքանակում, որ գտնվում է ռազմաբազայում», ներկայացրել է Լավրովն, ավելացնելով, որ ուրեմն այդ արձանագրությամբ տարածաշրջանում ուժերի հավասարակշռության մեջ փոփոխության մասին խոսք լինել չի կարող:**

**Սերգեյ Լավրովի մեկնաբանությամբ՝ N5 արձանագրությամբ երկարաձգված ժամկետն ու ռազմակայանի հետագա գործունեության շարունակումը որեւէ համաձայնություն չեն խախտում: «ՌԴ ռազմակայանի հիմնական նպատակը Ռուսաստանի շահերի ապահովումն է: Այդ շահերից է, անկասկած, նաեւ Հարավային Կովկասում եւ կասպյան տարածաշրջանում կայունության պահպանումը: Դա ռուսական ռազմակայանի սկզբնական նպատակն էր, երբ ստորագրվեց համապատասխան պայմանագիրը», ադրբեջանցի լրագրողներին ներկայացրել է Լավրովը:**

**Թե ինչ քայլեր կարող է ձեռնարկել Ռուսաստանը այսուհետեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցություններում որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, Լավրովն արձագանքել է, որ թեեւ տեսանելի արդյունքներ չկան, սակայն որպես գործընթացի մասնակից կարող է ասել, որ հանրությանը անտեսանելի, բայց արդյունքներ այդուամենայնիվ կան:**

**«Այն տարիների ընթացքում, ինչ Ռուսաստանը մասնակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գործունեությանը մեր ամերիկացի, ֆրանսիացի գործընկերների հետ, այն տարիների ընթացքում, ինչ Ռուսաստանը, Մինսկի խմբի դիրքորոշման հունով, ինքնուրույն փորձում է օգնել-մոտեցնել կողմերի դիրքորոշումները, վիճելի հարցերի բավականին էական կրճատում տեղի է ունեցել», ասել է ՌԴ ԱԳ նախարարը:**

**Ներկայացնելով, որ վերջին երկու տարում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահները հանդիպել են վեց անգամ, Լավրովն ընդգծել է, որ թեեւ ոչ բոլոր հիմնարար սկզբունքներն են համաձայնեցված, բայց տեքստի նշանակալի մասի առումով կա «փաստացի փոխզիջումային ձեւակերպումների հասնելու» ըմբռնում: «Մենք բավականին պարզ բան ենք առաջարկել. 2-3 հարցերը, որոնք դեռեւս համաձայնեցված ձեւակերպումների առարկա չեն, ամրագրել որպես հետագա քննարկում պահանջող: Այդուհետեւ հստակորեն գրանցել, որ առանց այդ երկու հարցերի որեւէ վերջնական համաձայնություն չի լինի: Այս փուլում դա հնարավորություն կտար ամրագրելու այն առաջընթացը, որին հասել ենք տեքստի մեծագույն մասի առնչությամբ, միեւնույն ժամանակ ցույց տալով, որ այդ հարցը պահպանվում է, եւ կա 2-3 կոնկրետ խնդիր, որոնց առումով լրացուցիչ ջանքեր պետք է գործադրել, եւ այդ տեսքով ամրագրել են, ինչին հասել են ներկա դրությամբ»:**

**Թեեւ դժվար է ասել, թե կիսատ-պռատ այդ թղթի ամրագրմամբ ինչի կարող են հասնել բանակցություններին մասնակցող կողմերն, ու ընդհանրապես ուր կհասնի հակամարտության կարգավորումը, սակայն դժվար թե որեւէ մեկը կարողանա երաշխավորել, որ այդպիսով միայն առավել չի ձգվի բանակցային գործընթացը, քանի որ որեւէ կողմը ուզածդ պահին կարող է կառչել չհամաձայնեցված կետերից ու այդպես էլ ավելի լճացնել առանց այդ էլ «ճահճացման» եզրին կանգնած հարցը:**

**Ամեն դեպքում, Լավրովի խոսքերով, այդ առաջարկության առնչությամբ Ռուսաստանը վայելում է իր համանախագահող գործընկերների աջակցությունը: Լավրովը հույս է հայտնել, որ «իրատեսական այդ առաջարկությունը աջակցություն կստանա»: Ծայրահեղ դեպքում, Լավրովի խոսքերով, համանախագահները կշարունակեն իրենց աշխատանքը: Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը իրենց իսկ առաջարկի ընդունումը, այսինքն՝ ներկա դրությամբ եղած համաձայնությունը 2-3 կետերի անհամաձայնությամբ ամրագրելը մեկնաբանել է որպես Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ հակամարտությունը խաղաղ կարգավորելու նպատակադրության նշան, որին սպասում է միջազգային հանրությունը:**

M ² Ь а ф т а ф Ш

United Nations Development Programme

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-83/84-10-HR**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում ծրագրի շրջանակներում հայտարարում է ազգային փորձագետների մրցույթ՝

**1. Ճարտարապետ/նախագծող**

**2. Շինարարական նորմերի ու ստանդարտների գծով փորձագետ**

Մանրամասն տեղեկություններին կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետից (Երևան, Պետրոս Ադամյան 14) կամ **http://www.undp.am/?page=Jobs** ինտերնետային կայքից:

Դիմումը կարելի է հանձնել պահակակետում կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** կայքում: Այն պետք է ընդգրկի ինքնակենսագրություն (CV), դիպլոմների/հավաստագրերի պատճեններ, ուղեկցող նամակ:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. սեպտեմբերի 10, ժամը 18:00

**Հարցազրույցի կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:**

## Ուշադրություն
## Սեպտեմբերի 6-ից 30-ը կանցկացվի «Հայաստանի հարկային համակարգ» ուսումնական դասընթացը

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվող «Հայաստանի հարկային համակարգ» ուսումնական դասընթացը կանցկացվի սեպտեմբերի 6-ից մինչեւ 30-ը: Դասընթացի նպատակն է՝ 69 ակադեմիական ժամի ընթացքում նախապատրաստել հարկային ծառայության թափուր պաշտոններ համալրելու համար անցկացվելիք մրցույթների մասնակիցներին, ուսուցանել համապատասխան մասնագետներին հարկային օրենսդրության եւ վարչարարության դրույթներին:

Դասընթացը անցկացվելու է Կոմիտասի 35 հասցեում գտնվող ՊԵԿ ուսումնական կենտրոնում երկուշաբթի-ուրբաթ օրերին: Մասնակցության համար կարող են դիմել միայն պետական եւ պետական հավատարմագիր ունեցող բուհերի շրջանավարտները:

Դասընթացը վճարովի է:

Դասընթացին մասնակցել ցանկացողները պետք է Պետական եկամուտների կոմիտեի Անձնակազմի կառավարման վարչություն /Խորենացի 7, 1-ին հարկ/ ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

1. դիմում
2. դիպլոմի պատճեն
3. անձնագրի պատճեն

Դասընթացին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 2-ը ներառյալ, ժամը 10.00-15.00-ն /բացի շաբաթ եւ կիրակի օրերից/:

Պայմաններին մանրամասն ծանոթանալու նպատակով կարող եք զանգահարել 594-628, 594-630, 594-631 հեռախոսահամարներով կամ այցելել Պետական եկամուտների կոմիտեի Անձնակազմի կառավարման վարչություն:

*ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե*

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ

**Հարգելի՛ բաժանորդ,**

«Պրես Սթենդ» ընկերությունը իր ընթերցողներին հնարավորություն է ընձեռում համատեղել հաճելին ու օգտակարը, խնայել ժամանակը՝ բաժանորդագրություն ձեւակերպելով մեր գործակալների միջոցով: Յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցում ցուցաբերելու համար «Պրես Սթենդ»-ի ցանկ է ներմուծվում տարբեր ուղղվածության պարբերականներ՝ ժամանցային ամսագրերից մինչեւ մասնագիտական գրականության տարբեր հրատարակչություններ՝ հայկական, ռուսական եւ արտասահմանյան: Մեր տեսականին ընդգրկում է ավելի քան 1000 անուն թերթ եւ ամսագիր: Բաժանորդագրության առավելություններից մեկը կայուն գինն է, որը փոփոխման ենթակա չէ բաժանորդագրության ողջ ընթացքում: Ամսական 10000 դրամը գերազանցող բաժանորդագրության փաթեթներն առաքվում են Ձեր նշած վայրը՝ տուն կամ աշխատավայր: Այլ դեպքերում բաժանորդագրության փաթեթը կառաքվի Ձեզ համար ամենահարմար «Պրես Սթենդ»-ի կրպակ:

Բաժանորդագրություն կարող եք ձեւակերպել՝

**• Բաժանորդագրության գործակալնեrrի միջոցով**
**• Հեռախոսով ՝ (010) 522-199**
**• Լրացնելով կտրոնը եւ թողնելով «Պրես Սթենդ»-ի ցանկացած կրպակում (ՀՀ տարածքում 279 կրպակ)**
**• Էլեկտրոնային փոստով subscribe@armpress.am**

**Բաժանորդագրությունը եւ առաքումը իրականացվում է ԱՆՎՃԱՐ:**

## Շնորհակալություն

Մայոր, ոստիկանության Եր. քաղաքի վարչ. պահպանության վաշտի հրամանատար՝ **Զարգարյան Կառլենին** շնորհակալ աշխատանքի համար:

*դասախոս Մ. Գ. Աղաբաբյան*

www.azg.am

¶ам²¼, Ж Р²Ш²р ¼²Ь¶²Р²рºИª 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 30.08.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: